

Կրթության հասանելիության ապահովում

Գործառնական ուղեցույց ֆաղաֆային բնակավայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ

© ՄԱԿ ՓԳՀ, 2011: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հեղինակային իրավունքի սեփականատերերը լիազորում են նյութի վերարտադրությունը եւ տարածումը կրթական կամ այլ ոչ առևտրային նպատակներով՝ առանց որևէ գրավոր թույլտվություն նախօրոք ստանալու՝ պայմանով, որ արդյունքն անբողջությամբ հիշատակված է: Վերավանձնելի կամ այլ առևտրային նպատակներով վերարտադրությունը կամ որևէ նպատակով թարգմանությունն արգելվում է՝ առանց հեղինակային իրավունքի սեփականատերերի կողմից գրավոր թույլտվություն ստանալու: Նման թույլտվություն ստանալու նպատակով դիմումները պետք է ուղղել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի Հանրային առողջապահության եւ ՄԻԱՎ հարցերի ենթաբաժին, էլ-փոստի հետևյալ հասցեին՝ HQPHN@unhcr.org:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից ձեռք են առնվել բոլոր ողջամիտ նախագրուեական միջոցները՝ այս հրատարակության մեջ պարունակվող տեղեկությունները ստուգելու համար: Այսուհանդերձ, հրատարակված նյութը տարածվում է առանց որևէ տեսակի երաժշտական գրքի՝ թե՛ բացահայտ, թե՛ ենթադրյալ: Նյութը մեկնաբանելու եւ օգտագործելու պատասխանատվությունը կրում է ընթերցողը: Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը որևէ կերպ չի կարող պատասխանատվության ենթարկվել այս հրատարակության օգտագործումից բխած վնասների համար:

Սույն փաստաթղթի պատճենները կարելի է ձեռք բերել հետևյալ հասցեով՝

1202 Ժնև, Շվեյցարիա

CP 2500

ՄԱԿ ՓԳՀ

Ծրագրային աջակցության եւ կառավարման բաժին

Հանրային առողջապահության եւ ՄԻԱՎ հարցերի ենթաբաժին

Էլ-փոստ. HQPHN@unhcr.org

Շապիկի լուսանկարը. Սիրիա/ Իրաքի փախստականներ/ Ալ-Ջահերա կլինիկան Դամասկոսում/ ՄԱԿ ՓԳՀ/ Բ.

Առգեր / 2008 թ. մարտ

Գրաֆիկական ձեւավորման հեղինակ՝ Ա. Մանուկի, Հոռոմ

Կրթության հասանելիության ապահովում

Գործառնական ուղեցույց ֆաղաֆային բնակավայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ԱՄՓՈՓ ԵՎԱՐԱԳԻՐ.....	6
ԵՊԱՏԱԿ	8
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱԿ ՓԳՀ-Ի ԳՈՐԾԱՌԵԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒԹՅՈՒ ՇԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԱՌԱՆՑՔԱԹԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ.....	8
ԳՈՐԾԱՌԵԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	9
1. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....	9
2. ԻՆՏԵԳՐՈՒՄ	17
3. ՈՐԱԿ	21
4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	22
5. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	28
6. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	32
7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	34
ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	41

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ - Արդյունաբերական կառավարում

ԱՌՄ - Ապահով ուսումնական միջավայրեր

ԲՀՈԼ - Բաց ու հեռակա ուսուցում

ԳՌԱ - Գլոբալ ազգամիջակա առաջնահերթություններ

ԴԱՖԻ [DAFI] - Փախստականների հարցերով գերմանական ակադեմիական Ալբերտ Էյնշտեյնի անվան
նախաձեռնություն

ԴՀԳ - Դիմումների համախմբված գործընթաց

ԵԳՊ - Երկրի գործառնական պլան

ԵՄԱԿԹ - Երկրում Միավորված ազգերի կազմակերպության թիմ

ԻԳ - Իրականացնող գործընկեր

ԻԳԱ - ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձ

ԿԻՈ - Կրթության ոլորտի դաշտային ուղեցույց

ԿԲՀ - Կրթություն բոլորի համար

ԿԿԱԽ - Կրթության կլաստերի աշխատանքային խումբ

ԿԿՏՀ - Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ

ԿՀԳ - Կարիքների համապարփակ գնահատում

ԿՆ - Կրթության նախարարություն

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՀմԿ - Համայնքային կազմակերպություն

ՀՏԿ - Համընդհանուր տարրական կրթություն

ՄԱԿ ԱԿՆ - Միավորված ազգերի կազմակերպության Աղջիկների կրթության նախաձեռնություն

ՄԱԿ ՓԳՀ - Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի
գրասենյակ

ՄԱԿԶԱԾ - Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման աջակցության ծրագիր

ՄԳ - Մոնիտորինգ եւ գնահատում

ԶՖԳ - Զախիստների ֆունկցիոնալ գրագիտություն

ՄՊՎ - Միջազգային պաշտպանության վարչություն

ՄՎԿ - Մասնագիտական վերապատրաստման կենտրոն

ՄՅԱԻԿ - Միջգերատեսչական ցանց հանուն արտակարգ իրավիճակներում կրթության

ՅՈՒՆԵՍԿՕ - Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպություն

ՅՈՒՆԻՍԵՖ/ՄԱՄՀ - Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ

ՊՀԾ - Պարենի համաժխարհային ծրագիր

ՍԳՀԲ - Սեռական եւ գենդերահեն բռնություն

ՍՑ - Ստանդարտներ եւ ցուցանիշեր

ՎՄԿ - Վաղ մանկական տարիքի կրթություն

ՏՄԲ - Տարիք, սեռ եւ բազմազանություն

ՏՀՀԿ - Տեխնոլոգիաների հասանելիության համայնքային կենտրոններ

ՏՀՏ - Տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաներ

ՏՏ - Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՈւԾԱ - Ուսուցիչ-ծնող ասոցիացիա

ՓԵՀ - «Փրկենք երեխաներին» հիմնադրամ

ՓՀ - Փոխըմբռնման հուշագիր

ՓՆ - Փոխըմբռնման նամակ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Քաղաքային բնակավայրերում կրթությունը հատկապես վնաս է կատարում փախստականների համար, ինչպես նաև գյուղական վայրերից եկող անձանց անհրաժեշտ հմտություններ կուտակելու հնարավորություն տալու առումով, որպեսզի նրանք դառնան ավելի ինֆնապայլեն եւ մեծացնեն աշխատանք գտնելու իրենց հնարավորությունները: Մինչ քաղաքներում բնակվող փախստականների թիվը մեծանում է, միասին դասերի հաճախող ինչպես տեղացի, այնպես էլ փախստական երեխաներին որակյալ կրթությամբ ապահովելը բուլսր շահագրգիռ կողմերի համար դառնում է հարաճուն մտահոգության առարկա:

Բազմաթիվ նմանություններ կան այն բանում, թե ինչպես են ՄԱԿ ՓԳՉ-ն եւ գործընկերներն արձագանքում քաղաքային միջավայրում կրթության հետ կապված մարտահրավերներին, սակայն առկա են նաև տարբերակներ եւ բնութագրական տարբերություններ, քանի որ քաղաքային փախստականի յուրաքանչյուր դեպք անկրկնելի է եւ պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Այդուհանդերձ, կան որոշ ավելի լայն ընդհանրություններ, որ քաղաքային կրթությունը իրականացնողները կարիք ունեն հաշվի առնելու քաղաքային միջավայրերի համար կրթական ծրագրեր կազմելու եւ իրականացնելու: Որպես զլխավոր սկզբունք՝ ամեն ջանք պետք է գործադրվի, որ փախստականները տեղացի երեխաների եւ երիտասարդների հետ ներգրավվեն հիմնական կրթության համակարգում, իսկ իշխանությունները կառավարեն եւ համակարգեն կրթական ոլորտում ծրագրային միջամտությունները, հարկ եղած դեպքում՝ ՄԱԿ ՓԳՉ-ի եւ գործընկերների աջակցությամբ: Փախստականներին պետական համակարգում ներառելը ապահովում է հարակալունություն եւ նպաստում ընդունող համայնքներում փախստականների խաղաղ գոյակցությանը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

Կրթության ազգային համակարգում փախստականների ինտեգրումը դյուրացնելու համար անհրաժեշտ են կառավարության եւ մարդասիրական ու զարգացման ոլորտների գործընկերների համատեղ ջանքերը: Հետեւաբար, ՄԱԿ ՓԳՉ-ն պետք է հնարավոր ամենավաղ փուլում կապեր եւ սիներգիաներ ստեղծի ազգային մակարդակով ընթացիկ եւ պլանավորված ծրագրերի հետ, որոնց աջակցում է դոնորային համայնքը, որոնցում կարող են ինտեգրվել փախստականները: Սա թույլ կտա աստիճանաբար կրճատել քաղաքային բնակավայրերում փախստականների կրթության ոլորտում ՄԱԿ ՓԳՉ-ի աջակցությունը եւ վերջիվերջո կհանգեցնի համապատասխան իշխանությունների կողմից հարակալուն կրթության ապահովման:

ՄԱԿ ՓԳՉ-ի նպատակը քաղաքային միջավայրերում փախստականների համար որակյալ կրթական ծառայությունների ապահովումն է նույն մակարդակով, ինչ առկա է տեղացիների համար: ՄԱԿ ՓԳՉ-ի հիմնական դերը քաղաքային միջավայրում փախստականների համար որակյալ կրթության առկայության եւ հասանելիության ապահովմանը աջակցումն ու դրա դյուրացումն է: Քաղաքներում առկա են կրթական ծառայություններ տրամադրող բազմատեսակ կառույցներ, այդ թվում՝ պետական, մասնավոր, տեղական եւ միջազգային հասարակական կազմակերպություններ (ՀԿ), քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ): Կրթության նախարարության (ԿՆ) եւ քաղաքային իշխանությունների հետ աշխատելիս՝ ՄԱԿ ՓԳՉ-ն գործակցում է դերակատարների եւ շահագրգիռ կողմերի մի լայն շրջանակի հետ՝ խթանելով ընդհանուր պատասխանատվություն եւ հետամուտ լինելով պատշաճ ռեսուրսային հենքի ստեղծմանը, որպեսզի հնարավոր լինի բավարարել քաղաքային բնակավայրերում ապրող փախստականների կարիքները:

Այն դեպքերում, երբ պետական համակարգում ներառումը շարունակում է խնդիր լինել, ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ՀԿ-ների կողմից սատարվող դպրոցների հասանելիությանը եւ օժանդակում փախստականների համար նախատեսված համայնֆահեկն դպրոցներին՝ որպես անցումային լուծում՝ որակի ստանդարտներին հասնելու, հանաչված հավաստագրում ձեռք բերելու եւ Կրթության նախարարության կողմից գրանցվելու հանապարհին:

Կրթության բնագավառում ՄԱԿ ՓԳՀ-ի երեք հիմնական խնդիրներն են՝ **մեծացնել հասանելիությունը, բարելավել որակը եւ ընդլայնել պատասխանությունը**¹: Այս խնդիրները վերաբերում են համբարներում բնակվող եւ համբարներում չբնակվող փախստական համայնքներին, այդ թվում նրանց, ովքեր հաստատված են ֆաղաֆային բնակավայրերում:

Փախստականների կրթական կարգավիճակը չի կարող բարելավվել միայն կրթական ծառայություններ մատուցողների կողմից. պետք է կարգավորվեն նաեւ կրթության հիմքում ընկած որոշիչ գործոնները՝ կենսամիջոցների բարելավման եւ եկամուտների ստեղծման, պարենային ապահովության եւ սնուցման, պատշաճ կացարանի եւ բնակարանային պայմանների, առողջապահական ծառայությունների, ջրօգտագործման ու սանիտարական պայմանների հասանելիության ապահովման հանապարհով: Ուստի, ՄԱԿ ՓԳՀ-ն ներգրավվում է բազմաթիվ ոլորտներ եւ բազմապիսի գործակալություններ ընդգրկող մեխանիզմներում, որոնք ուղղված են խոցելիության հիմքում ընկած պատճառների վերացմանը՝ միեւնույն ժամանակ նպատակային կրթական հնարավորություններ ստեղծելով ֆաղաֆաբնակ փախստականների համար: Հնարավոր է՝ կարիք լինի, որ ՄԱԿ ՓԳՀ-ն ստեղծի եւ աջակցի ապահովության հատուկ ցանցերի, որոնք կօգնեն առավել կարիքավոր փախստականներին եւ, հնարավորության դեպքում, նրանց շրջակա միջավայր հանդիսացող տեղական համայնքներին:

Այս փաստաթղթում «կրթություն» եզրույթը վերաբերում է ֆորմալ կրթությանը (տարրական, միջնակարգ եւ բարձրագույն) եւ ոչ ֆորմալ կրթությանը (գրագիտություն, հմտությունների ուսուցում եւ կյանքի հմտություններ): Կրթական այլ ծառայությունները, որոնց անդրադարձ է արվում, ներառում են վաղ մանկական տարիքի կրթությունը (ՎՄԿ) եւ չափահասների կրթությունը, այդ թվում՝ չափահասների ֆունկցիոնալ գրագիտությունը (ԶՅԳ): Գլխավորապես մասնագիտական եւ հմտությունների ուսուցման վերաբերյալ է «ՄԱԿ ՓԳՀ. Կենսամիջոցներ. ֆաղաֆային բնակավայրերում փախստականների պատասխանության եւ լուծումների վերաբերյալ գործառնական ուղեցույցը»: Այս ուղեցույցները նպատակ ունեն ՄԱԿ ՓԳՀ-ին եւ գործընկերներին տրամադրել հիմնական գործիքներ այն մասին, թե ինչպես պլանավորել, իրականացնել եւ մոնիտորինգի ենթարկել (դիտարկել) ֆաղաֆային բնակավայրերում կրթական ծրագրերը՝ նպատակ ունենալով ապահովել որակյալ ծառայություններ եւ համակարգված մարդասիրական արձագանք՝ բավարարելու հզնաժամերից եւ աղետներից տուժած անձանց, այդ թվում՝ փախստականների կրթական իրավունքներն ու կարիքները: Դրանք համապատասխանեցված են արտակարգ իրավիճակներում կրթության վերաբերյալ ՄՅԱԻԿ գերակայություններին²:

¹ ՄԱԿ ՓԳՀ Կրթական ռազմավարություն [UNHCR Education Strategy], www.unhcr.org

² Միջգերատեսչական ցանց համան կրթության արտակարգ իրավիճակներում (ՄՅԱԻԿ) [Inter-Agency Network for Education in Emergencies (INEE)], «Կրթության նվազագույն ստանդարտներ. պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում» [Minimum Standards for Education: Preparedness, Response, Recovery], 2-րդ հրատարակություն, 2010 թվական, www.ineesite.org

Այս գործառնական ուղեցույցի ուժադրության առանցքում փախստականներն ու ապաստան հայցողներն են, բայց որոշ համատեքստերում այն կարող է կիրառվել ֆաղափառություն չունեցող անձանց, ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) եւ հայրենադարձների դեպքում: «Փախստական» եզրույթն ուղեցույցում կիրառվում է ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց անդրադառնալիս: Այս ուղեցույցը կիրառելի է բոլոր այն երկրների դեպքում, որտեղ գործում է ՄԱԿ ՓԳՀ-ն, եւ սակայն է ֆաղափառ բնակավայրերում ապրող փախստական բնակչություն: Այն մշակված է ֆաղափառ համատեքստի համար, սակայն կարող է կիրառելի լինել նաեւ ոչ համբարային գյուղական միջավայրերի դեպքում:

ՆՊԱՏԱԿ

Տրամադրել գործառնական ցուցումներ առանձին երկրներում ՄԱԿ ՓԳՀ ծրագրերի համար՝ հետամուտ լինելու եւ աջակցելու, որ փախստականները հնարավորություն ունենան օգտվելու որակյալ կրթական ծառայություններից, որոնք համարժեք կլինեն տվյալ երկրի բնակչությանը տրամադրվող ծառայություններին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱԿ ՓԳՀ-Ի ԳՈՐԾԱՌԱՌԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Այս սկզբունքները բխում են ֆաղափառ վայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ֆաղափառությունից³ եւ կրթության ուղեկիցային սակայն սկզբունքներից⁴ ու ուղղորդման փաստաթղթերից, որոնք հարմարեցվել են ֆաղափառ միջավայրին:

1. Հասանելիություն. Ապահովել, որ կրթական բոլոր ծառայությունները փախստականների համար հասանելի լինեն նույն կերպ եւ միեւնույն գնով, ինչ եւ տվյալ երկրի ֆաղափառների համար: ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է դիմել գործընկերներին, որպեսզի նրանք ժամանակավորապես մատուցեն կրթական ծառայություններ այն դեպքերում, երբ այդ ծառայությունների մատուցման ասպարեզում առկա են զգալի բացեր:

2. Ինտեգրում. Հետամուտ լինել, որ փախստականների համար նախատեսված հարակալուն կրթական ծառայություններն ինտեգրվեն տվյալ երկրի պետական համակարգում, երբ եւ որտեղ հնարավոր է:

3. Որակ. Ապահովել, որ փախստականներին առաջարկվող կրթությունը համապատասխանի ազգային եւ միջազգային ստանդարտներին եւ ապահովի անվտանգ ու երեխայի համար բարենպաստ ուսումնական միջավայր, լավ կրթված ուսուցիչներ՝ երեխայակենտրոն մանկավարժության հիմնադր իմացությամբ, ինչպես նաեւ սարքավորումներով բավարար չավով հագեցած ենթակառուցվածք եւ հարմարություններ:

³ «Քաղաքային միջավայրում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ ֆաղափառություն» [Policy on Refugee Protection and Solutions in Urban Areas], ՄԱԿ ՓԳՀ, 2009, www.unhcr.org

⁴ «Կրթության բնագավառի ուղեցույց, ներառյալ՝ կրթությունը ֆաղափառ բնակավայրերում» [Education Guidelines, incorporating Education in Urban Settings], վերանայվել է 2011 թ. սկզբում, www.unhcr.org

4. Պաշտպանություն. Տրամադրել պաշտպանություն և հատուկ աջակցություն փախստականների համայնքների առավել խոցելի խմբերին և անհատներին, այդ թվում՝ բաժանված ծնողների երեխաներին և ծնողագուրկ երեխաներին, ռիսկային խմբերի աղջիկներին և կանանց, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց և հատուկ կրթության կարիք ունեցող փախստականներին, որպեսզի նրանք կարողանան արդարացի հիմունքներով օգտվել կրթությունից: Ապահովել պաշտպանվածության հետ կապված ռիսկերից զերծ կրթություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով գեղդերային հարցերին ու պաշտպանությանը:

5. Գործընկերություններ: Գործակցել դերակատարների լայն շրջանակի, հատկապես՝ կառավարության, տեղական իշխանությունների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների, քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպությունների, կրթական հաստատությունների և մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու կրթական որակյալ ծառայությունների առկայությունը փախստականների համար:

6. Մասնակցություն. Ապահովել, որ համայնքի անդամներն ակտիվորեն, թափանցիկ կերպով և առանց խտրականության մասնակցեն քաղաքային բնակավայրերում կրթական ծրագրերի նախնական գնահատման, պլանավորման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներին:

7. Մոնիտորինգ և գնահատում. Ստեղծել և կիրառել մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) գործուն համակարգեր՝ բարելավելու ծրագրի իրականացումը, գերակայությունների որոշումը և ազդեցությունը:

Նկարի գրառումը. *Հորդանան / Հորդանանցի և իրաքի դպրոցական աղջիկներն իրենց նոր՝ 2007/2008 ուսումնական տարվա 3-րդ օրը են սկսում Բաբ-ալ-Վազ համայնքի իզոլացիոն միջնակարգ դպրոցում, որը գտնվում է Ամմանի ալ-Շաեմի ալ-Շամալի քաղաքում, Հորդանան /ՄԱԿ ՓԳՀ/ Ս. Մալխալի/ օգոստոս, 2007 թվական:*

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

I. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ապահովել, որ կրթական բոլոր ծառայությունները փախստականների համար հասանելի լինեն նույն կերպ և միեւնույն գնով, ինչ տվյալ երկրի քաղաքացիների համար: ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է դիմել գործընկերներին, որպեսզի նրանք ժամանակավորապես մատուցեն կրթական ծառայություններ այն դեպքերում, երբ այդ ծառայությունների մատուցման ասպարեզում առկա են զգալի բացեր:

Կրթական ծառայությունների հասանելիության առումով փախստականները բախվում են բազմաթիվ խոչընդոտների, որոնք պայմանավորված են տնտեսական, աշխարհագրական, մշակութային, լեզվական և վարչական հանգամանքներով: Քաղաքներում կրթական ծառայությունները կարող են հասանելի չլինել փախստականներին մի քանի պատճառներով. չափազանց թանկ, չափազանց հեռու լինելը կամ ամեն օր տեղ հասնելու չափազանց մեծ ծախսերը, անուշադրություն (ապրումակցման պակաս) տարբեր էթնիկ խմբերի պատկանող մարդկանց մշակութային նրբությունների նկատմամբ, հեռավոր է, որ դպրոցները չկարողանան տեղեր հատկացնել այն երեխաներին, ովքեր բաց են թողել ուսումնառության որոշակի հատված, կրթության հասանելիությանը կարող են խանգարել նաև լեզվական խոչընդոտները:

Գործնական ֆայլեր հասանելիությունն ընդլայնելու նպատակով

1.1 Արդյունավետ իրավական միջավայրի խթանում

Վերլուծել համապատասխան օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը, որոնք առկա են ապաստան տրամադրած երկրում, և հաշվարկել այս օրենքների պրակտիկ հետեւանմանը փախստականների առնչությամբ՝ կրթական ծառայությունների հասանելիության և տրամադրման տեսակետից:

-- Գնահատել փախստականներին վերաբերող օրենսդրական դաշտը, քանի որ տարբեր երկրներում այն միանման չէ: Կառավարությունները կարող են միացած լինել կամ չլինել միջազգային կոնվենցիաների, ինչպիսիք են 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, 1966 թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և 1990 թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: Տվյալ երկիրը կարող է ընդունած լինել իր սեփական օրենքը փախստականների մասին, այլ օրենսդրական ակտեր կամ հրահանգներ, որոնք նկարագրում են ծառայություններից, ներառյալ՝ կրթական ծառայություններից, օգտվելու՝ փախստականների իրավունքները:

-- Կառավարություններին իրագրել իրենց պարտականությունների վերաբերյալ, որպեսզի իրենց տարածքներում բնակվող փախստականները տեղական օրենքների և օրենսդրության հիման վրա ստանան ամենաբարձր չափանիշերի բավարարող կրթություն: Հարկ եղած դեպքում ՄԱԿ ՓԳՀ-ն և գործընկերները պետք է իրականացնեն ֆարզչություն հոգուտ փոփոխությունների և բարելավումների:

-- Հետամուտ լինել, որ փախստականներն ունենան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր/ նույնականացման փայտեր, ինչը նրանց համար կդյուրացնի կրթական ծառայություններից օգտվելը:

-- Ապահովել, որ փախստականների համար լիովին հասանելի լինեն տեղի ֆաղափացիների համար բաց կրթական հաստատությունները: Հարակալունության (Շարունակականության) ապահովման տեսանկյունից էական է կառավարության հանրային կրթության համակարգի հասանելիության բարելավումը:

-- Քարոզել հոգուտ խտրական այնպիսի շրջաբերականների կամ գործելակերպի վերացման, որոնք խոչընդոտում են կրթության հասանելիությունը: Սա ներառում է դպրոցական վարձերը այն դեպքերում, երբ կրթությունն անվճար է, փախստականների խմբերի կամ հատուկ կարիքներով անձանց մեկուսացումը, այն երեխաների մերժումը, ովքեր տեղափոխության ընթացքում կորցրել են իրենց փաստաթղթերը, կամ՝ անբարյացակամությունն ու թեմանմանը փոփրամասնությունների և տարբեր էթնիկ խմբերի նկատմամբ:

-- Քարոզչություն իրականացնել հոգուտ կրթության հասանելիության նաև այն երկրներում, որտեղ խնդիրներ կան ազգային համակարգերում և ծառայություններում (իրավական և ֆաղափական) ինտեգրման հետ կապված՝ միեւնույն ժամանակ աջակցելով ՀԿ-ներին և փախստականների դպրոցներին՝ որպես անցումային տարբերակ: Հարկ է, որ այսօրինակ դպրոցները հետեւեն որեւէ կրթական ծրագրի, որը հավաստագրված է կամ ընդունող, կամ ծագման երկրի կողմից և հաստատված է Կրթության նախարարության (ԿՆ) կողմից: Աջակցությունը կարող է ներառել ուսուցիչների վերապատրաստումը որակի բարելավման նպատակով, լեզվի ուսուցումը, պաշտոնական ուսուցանողների և դասագրքերի

ապահովումը եւ փախստականների դպրոցների արդիականացումը՝ համաձայն ազգային ստանդարտների, որպեսզի դրանք գրանցվեն ԿՆ կողմից:

1.2 Տնտեսապես կենսունակ հասանելիության բարելավում

Իրականացնել շահերի պաշտպանություն եւ զարգացման գործընկերների (մասնավորապես՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ մյուսների) հետ միասին բանակցել Կրթության նախարարության (ԿՆ) հետ, որպեսզի փախստականները հանրային (պետական) կրթության համակարգի բոլոր մակարդակներում ստանան կրթական ծառայություններ այնպիսի արժեքով, որը համադրելի է տեղացիների ստացած ծառայությունների արժեքի հետ:

-- ՄԱԿ ՓԳՀ-ն նպատակ ունի աջակցել եւ ամրապնդել փախստականների համար մատչելի կրթության եւ կրթական ծառայությունների հասանելիության ապահովմանը, մասնավորապես պետական հատվածի միջոցով:

-- ՄԱԿ ՓԳՀ-ն հետամուտ է, որպեսզի վաղ մանկական, տարրական, հետ-տարրական եւ բուհական կրթությունը հասանելի լինի փախստականների համար միեւնույն արժեքով, ինչ տեղի քաղաքացիների համար, կամ առանց որեւէ վճարի, եթե առկա են անվճար կրթական ծառայություններ:

1.3 Ֆինանսավորման տարբեր եղանակների բացահայտում

Քննության առնել եւ որոշել ֆինանսավորման տարբերակները, որոնք անհրաժեշտ են այն փախստականներին աջակցելու համար, որոնք ստիպված են ուսման վարձ վճարել՝ կրթական ծառայություններից օգտվելու եւ հատուկ կրթություն ստանալու համար, եթե նման անհրաժեշտություն կա:

-- Պետք է վերլուծել այն բոլոր ծախսերը, որ փախստականները կատարում են կրթական ծառայություններից օգտվելու համար, այդ թվում՝ դպրոցական վարձերը (եթե կիրառելի է) եւ դպրոցի հետ կապված ծախսերը, մասնավորապես՝ տրանսպորտի, գրքերի, գրենական պիտույքների, համագգեստի, դպրոցում սնվելու եւ այլ ծախսերը:

-- Խոցելի անձանց դեպքում, ըստ անհրաժեշտության, օգտագործել ֆինանսավորման տարբեր մեխանիզմներ, ներառյալ՝ թիրախավորված կանխիկ դրամական օգնություն (որը կարող է տրվել բանկոմատների, վաուչերների կամ բջջային հեռախոսներին փոխանցումների միջոցով) կամ այլ նորարարական ֆինանսավորման համակարգերի միջոցով, որոնք կարող են առկա լինել տեղացիների համար:

-- Իրականացնել ծախսերի մանրակրկիտ վերլուծություն՝ համեմատելու կանխիկ դրամային օգնությունը բնախրային (ոչ դրամական) օգնության հետ եւ ապահովելու, որ այդ մեխանիզմները չբացառեն առանձնահատուկ կարիքներով մարդկանց կամ սվյալ տարիքային խմբի սահմանը գերազանցող տարիք ունեցող երեխաներին կամ դպրոցահասակ աղջիկներին:

-- Հնարավորության դեպքում ուսման վարձերը վճարել անմիջապես դպրոցներին (կանխիկ հատկացումները դժվար կլինի ենթարկել մոնիտորինգի):

-- Քննարկել է և որոշում կայացրել անհատական օժանդակության փաթեթների վճարման (դպրոցի հետ կապված ծախսերի) կամ դպրոցական այնպիսի նախագծերին աջակցման վերաբերյալ, որոնց իրականացումից կշահի դպրոցական ողջ համայնքը:

-- Բանակցել մասնավոր հատվածում վարձավճարների նվազեցման շուրջ:

-- Ձգտել կառավարության կողմից տրամադրվող ծառայությունները փախստականների համար դարձնել մատչելի՝ փախստական տնային տնտեսությունների կենսամիջոցների և եկամտի բարելավման միջոցով (տե՛ս Ուղեցույցների մոդուլ IV-ը՝ «Կենսամիջոցների ապահովման գործառնական ուղեցույց»):

1.4 Ապահովել կրթական ծառայությունների հասանելիությունը ըստ տարատեսակ կարիքների

Պարզել ֆաղափարների փախստականների շրջանում բազմազանությունից բխող կարևոր խնդիրները և գործընկերների հետ համագործակցաբար մշակել շահերի պաշտպանության և աջակցության մեխանիզմներ՝ կրթական ծառայությունների արդարացի և համահավասար հասանելիության համար: Պետական կրթական ծրագրերը պետք է լինեն տարիքային, գենդերային և բազմազանության խնդիրները հաշվի առնող՝ ապահովելու աղջիկների, կանանց, տարեցների, փոքրամասնությունների փախստական խմբերի և ֆաղափարների հաճանկամություն ունեցող կամ հատուկ կարիքներ ունեցող անձանց լիակատար ներառումը:

-- Հետամուտ լինել, որ ձեռափոխումների ենթարկվեն համապետական հանրային կրթության ծառայությունները, այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է և հնարավոր է, որպեսզի դրանք ունակ լինեն բավարարելու փախստական բնակչության բազմազան կարիքները: Այդուհանդերձ, փախստականներին հիմնական կրթության մեջ ինտեգրելու գործընթացները չպետք է լինեն ի հաշիվ փախստականների բացառիկ կարիքների բավարարման:

-- Պարզել և արձագանքել տարբեր լեզուներով խոսող և տարբեր մշակույթների պատկանող փախստականների կարիքներին, ովքեր հնարավոր է, որ դժվարություններ ունենան անձանոթ կրթական համակարգից օգտվելիս, այդ թվում նրանք, ովքեր բաց թողնված ուսումնառությունը լրացնելու հարցում աջակցության կարիք ունեն:

-- Նպատակային աջակցություն ցուցաբերել այն փախստականներին, ովքեր տեղեկատվական հանդիպումների, լրացուցիչ դասերի, ներածական դասընթացների, լեզվի ուսուցման, գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման և/կամ ֆիզիկական և սեռական բռնության որոշակի դրսևորումներից պաշտպանության կարիք ունեն:

1.5 Փախստականների համար առկա կրթական ծառայությունների բացահայտում և դրանց աջակցում

Քարտեզագրել ֆաղափարին բնակավայրերում առկա ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունները, այդ թվում՝ ցերեկային խնամք, վաղ մանկական տարիքի կրթություն (ՎՄԿ), տարրական, միջնակարգ, բուհական, ոչ ֆորմալ, մեծահասակների և միջին մասնագիտական կրթություն: Բազմաթիվ հնարավորություններ արդեն իսկ առկա են, և փախստականներին դրանց հետ կապելը կենսական անհրաժեշտություն է:

Շատ երկրներում ՅՈՒՆԻՍԵՖ-ը ծրագրերի միջոցով աջակցում է կրթության նախարարություններին՝ ՎՄԿ, տարրական, հետտարրական կրթության և արագացված ուսումնական ծրագրերի առումով: Այլ գործընկերներ

նույնպես աջակցում են վերանշյալ ուղղություններին, ինչպես նաև երիտասարդների և մեծահասակների համար նախատեսված կրթական ծրագրերին:

1.5.1 Ֆորմալ կրթություն

-- Պարզել ֆորմալ կրթության հնարավորությունները ըստ «Կրթություն բոլորի համար» (ԿԲՀ) նախաձեռնության, այն է՝ վաղ մանկական տարիքի կրթություն և խնամք (Նպատակ 1), համընդհանուր տարրական կրթություն (Նպատակ 2), երիտասարդների և չափահասների կրթական կարիքներ (Նպատակ 3), չափահասների գրագիտության մակարդակի բարելավում (Նպատակ 4), գենդերային հավասարակշռության և հավասարության գնահատում (Նպատակ 5) և որակ (Նպատակ 6): Նկատի առնել, որ որոշ երկրներ ներդրել են անվճար միջնակարգ կրթության համակարգ: Այլ երկրներ կրկին տրամադրել են կրթության հասանելիություն կամ ապահովել են փախստականների ներառում, անգամ այն դեպքերում, երբ չեն ստորագրել համապատասխան կոնվենցիաները:

-- Մասնավոր և պետական դպրոցների/ հաստատությունների հետ համաձայնության հասնել փախստական երեխաների և երիտասարդների համար հատուկ վարձավճարների սահմանման հարցում:

-- Փախստականներին տեղավորել հավասարված մասնագիտական և հմտությունների ուսուցման կենտրոններում՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, ստեղծել աշխատության (փորձնակության) հնարավորություններ (Կենսամիջոցների ապահովման ծրագրի հետ համագործակցաբար):

-- Ներգրավել կրթական հաստատություններին, համալսարաններին, բուհերին և մասնավոր դոնորներին՝ կրթաբաժնակալին ծրագրերի համար աջակցություն հավաքագրելու նպատակով, առկա հնարավորությունները ֆարտեզագրելու, երկկողմ հանդիպումներ անցկացնելու, համատեղ դաշտային այցեր կազմակերպելու, ֆադաբանակ փախստականների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ տրամադրելու և միջոցների հավաքագրման նպատակով դոնորային համայնքի «կլոր սեղաններ» կազմակերպելու միջոցով:

1.5.2 Ոչ ֆորմալ կրթություն

-- Քարտեզագրման միջոցով պարզել ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները, որոնք փոխլրացնում են ֆորմալ համակարգը՝ գնահատելով առաջարկվող ծառայությունների որակը, պարզելով բացերը, որոնց հասցեագրման համար անհրաժեշտ է արտաքին օգնություն, և համաձայնության հասնելով փախստականների ներառման շուրջ: Ոչ ֆորմալ կրթությունը կարող է ընդգրկել կոնկրետ կարիքներին համապատասխան մշակված հատուկ դասընթացներ այն երիտասարդների ու չափահասների համար, ովքեր չունեն հանաչված հավասարաբեր և կրթության վկայականներ:

-- Գործակցել երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող գործընկերների հետ՝ ապահովելու, որ վաղ տարիքի երեխաները հաճախեն ցերեկային խնամքի հաստատություններ: Հնարավոր է՝ փախստականներն աշխատանքի գնալիս վաղ տարիքի երեխաներին թողնում են տանը՝ միայնակ կամ անբավարար խնամքի պայմաններում: Իրականացնող գործընկերները կարող են աջակցել համայնքային ցերեկային խնամքի ոչ բանկարժեք ծառայությունների կազմակերպմանը՝ համայնքի համապատասխան անդամներին վերապատրաստելով վաղ տարիքի երեխաների խնամքի և զարգացման թեմայով: Որոշ երկրներում առկա են ցերեկային խնամքի պետական ծառայություններ, որտեղ կարող են

ուղղորդվել փախստականները, ինչը նաև հնարավորություն կստեղծի, որպեսզի փախստական երեխաները շփվեն ընդունող համայնքի երեխաների հետ:

-- Օգնել ուսուցման գործընթացը բաց թողած երեխաներին՝ հասնել իրենց հասակակիցներին: Ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի երեխաները հաճախեն իրենց տարիքին համապատասխան ճիշտ դասարան: Շատ երկրներում նրանց թույլատրվում է դպրոց հաճախել միայն իրենց տարիքային խմբի հետ: Կարող է անհրաժեշտ լինել, որ նրանք, նախքան դպրոցում ընդգրկվելը, հաճախեն բաց թողածը լրացնող դասընթացների եւ/կամ դպրոցից հետո ստանան լրացուցիչ օժանդակություն, ինչն այդպիսի երեխաներին կօգնի հասնել դասարանի ընդհանուր մակարդակին: ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերները պետք է ապահովեն, որ երեխաները ժամանելուն պես պատշաճ կերպով գնահատվեն, որպեսզի նշանակեն որոշվի նրանց հմտությունների եւ բանիմացության մակարդակը: Երեխաները եւ երիտասարդները, ովքեր չեն բավարարում իրենց դասարանի համար պահանջվող ուսումնական/ հմտությունների մակարդակը, պետք է լրացուցիչ օժանդակություն ստանան: Տվյալ դասարանի չափանիշերին համաժայլ գնալու անկարողությունը դպրոցից դուրս մնալու հիմնական պատճառներից մեկն է:

-- Ավելի բարձր տարիքի երեխաների համար, ովքեր բաց են թողել ուսումնառության զգալի թվով տարիներ եւ չեն կարող միանալ ֆորմալ կրթության համակարգին, կիրառել արագացված ուսուցման ծրագրեր:⁵ Բազմաթիվ երկրներում ստեղծվել են այսպիսի ծրագրեր՝ ավելի բարձր տարիքի սովորողներին զգալիորեն սեղմ ժամկետներում տարրական եւ/կամ միջնակարգ կրթությունը լրացնելու հնարավորություն տալու նպատակով: Սա նրանց թույլ է տալիս ստանալ պատշաճական հավաստագրում եւ ֆորմալ կրթական համակարգին միանալու ներուժ: Ուսումնասիրել այն, թե արդյո՞ք առկա են արագացված ուսուցման ծրագրեր, մասնավորապես՝ պարզել ԿՆ գրագիտության բաժնից, ոչ ֆորմալ կրթության կամ համարժեք այլ ստորաբաժանումից: Այս ծրագրերը հաճախ սատարվում են ՅՈՒՆԵՍԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ կազմակերպությունների կողմից:

-- Կազմակերպել տեղերում տեղեկությունների հավաքման ծրագրեր (կամ դպրոցների, կամ համայնքների հետ)՝ պարզելու դպրոցներում չներառված երեխաներին, գնահատելու նրանց կրթական կարիքները եւ աջակցելու, որ նրանք ստանան պատշաճ կրթություն՝ կամ ֆորմալ ուղարտում (սա սովորաբար ավելի մեծ հաջողություն ունի փոքր տարիքի երեխաների դեպքում), կամ՝ արագացված ուսուցման ծրագրերում, կամ՝ տեխնիկական/միջին մասնագիտական հմտությունների ուսուցման միջոցով:

-- Պարզել, թե բաց եւ հեռակա ուսուցման (ԲՀՈւ) ինչպիսի ծրագրեր են առկա փախստականների համար եւ աշխատել համապատասխան իրականացնող գործընկերոջ հետ՝ աջակցելու փախստականների ներգրավմանը եւ ավարտական

⁵ Որոշ դեպքերում կրթական համակարգերը թույլ չեն տա, որ բարձր տարիքի երեխաները ներառվեն: Մեկ այլ խոչընդոտող գործոն է ավելի բարձր տարիքի սովորողների չկամությունը՝ սովորելու մի դասարանում, որտեղ մյուս երեխաները տարիքով շատ ավելի փոքր են: Ի լրաման, նրանք, ովքեր տարիներ շարունակ դուրս են մնացել կրթական համակարգից, հաճախ դժվարանում են հարմարվել ֆորմալ կրթության փարսցածությունը:

հավաստագիր ստանալուն: Տեխնոլոգիաների հասանելիության համայնֆային կենտրոնների (ՏՀՀԿ) ծրագրի եւ ԲՀՈւ դաւընթացների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար դիմել ՄԱԿ ՓԳՀ կենտրոնական գրասենյակ:⁶

-- Աջակցել կյանքի հմտությունների ուսուցմանը՝ նպատակ ունենալով հասնել վերաբերմունքի եւ վարձագծի փոփոխության գիտելիքի, հմտությունների եւ արժեքների միջոցով: Սա ներառում է խաղաղության թեմայով կրթությունը, հակամարտությունների կարգավորումը, մարդու իրավունքները, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կանխարգելիչ առողջապահությունը եւ փախստականների կյանքին առնչվող այլ թեմաներ: Մարզական ծրագրերը նույնպես կյանքի հմտություններ ձեռքբերելու արժեքավոր ուղի են, ինչպես նաեւ հանդուրժողականությունը, թիմային աշխատանքը եւ հարաբերությունների հաստատումը խթանելու կոնկրետ հնարավորություն:

-- Աջակցություն ցուցաբերել ոչ ֆորմալ կրթական գործունեությանը, ինչպիսիք են լեզվի դաւընթացները, գրագիտության ուսուցման դաւընթացները, կյանքի հմտությունների ուսուցանումը եւ հիմնական հմտությունների ուսուցումը: Հայրենի երկրի լեզվի, պատմության եւ մշակույթի դասերի ապահովումը կարեւոր է. կարելի է կազմակերպել արտադասարանային պարապմունքներ համայնֆային ուսուցիչների հետ:

-- Դասերի հանախող երիտասարդ մայրիկների համար կազմակերպել աջակցություն ցերեկային խնամքի հարցում, որը կապահովվի համայնքի կողմից կազմակերպված ցերեկային խնամքի միջոցով (սովորաբար իրականացվում է տնային պայմաններում):

1.6 Կրթաթոշակի տրամադրում միջնակարգ եւ բուհական կրթության համար

Կրթաթոշակ ապահովել այն փախստականների համար, որոնք բավարարում են հետտարրական եւ բարձրագույն կրթության հնարավորություններից օգտվելու պահանջները:

-- Հայտնաբերել հնարավոր դոնորների, որոնք փախստականներին կհավանավորեն միջնակարգ եւ/կամ բուհական կրթություն ստանալու հարցում, եւ համաձայնագիր մշակել իրականացնող որեւէ գործընկերոջ հետ՝ կրթաթոշակների կառավարման հարցով: Ապահովել, որ ֆինանսավորումը լինի մի քանի տարվա համար՝ ծածկելու դասերի/դաւընթացների ողջ տեւողությունը: Կրթաթոշակներ ապահովել հետտարրական կրթության նպատակով, հատկապես աղքիկների համար, որպեսզի նրանց համար հասու լինի ավելի բարձր մակարդակի միջնակարգ, համալսարանական եւ/կամ տեխնիկումային կրթությունը:

-- Եթե առկա է գոյություն ունեցող «DAFI»⁷ կրթաթոշակային ծրագիր, երկարաձգել իրականացնող գործընկերոջ հետ գործընկերությունը՝ ներառելու տեղերում առաջարկվող կրթաթոշակները:

⁶ ՀՏՀ ծրագրի սեղակայված է ՄԱԿ ՓԳՀ / DPSM-ում: Բաց եւ հետակա կրթության առկա ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների համար դիմել Կրթության բաժին:

⁷ Տե՛ս «Քաղաքականություն եւ ուղեցույցներ «DAFI» կրթաթոշակային ծրագրերի համար» [Policy and Guidelines for DAFI Scholarship Projects], Ժնև, 4-րդ հրատարակություն, հոկտեմբեր, 2009 թվական:

-- Համալսարանների եւ բարձրագույն կրթության հաստատությունների հետ բանակցել փախստականների համար կրթաթոշակներ եւ/կամ մասնակիորէն փոխհատուցվող դասընթացներ ապահովելու հարցով:

-- Բանակցել եւ հասնել համաձայնության, որ ՄԱԿ ՓԳՀ-ում կամ ընդունող կառավարության կողմից գրանցված փախստական ուսանողների համար սահմանվեն գրանցման եւ ուսման այնպիսի վճարներ, որոնք համարժեք են տեղի բաղաձայնների համար կիրառվող վճարներին: Որտեղ սա հնարավոր չէ, բանակցել, որ գանձվեն օտարերկրացի ուսանողների համար կիրառվող նվազեցված վարձավճարներ:

-- Փոխըմբռնման հուշագրի կամ Փոխըմբռնման նամակի տեսքով ամրագրել ուսման վարձերի համաձայնեցված չափերը եւ պետական համալսարաններում կամ այլ հաստատություններում տեղավորման ենթակա ուսանողների ֆանակները՝ ապահովելու այս համաձայնությունների պարտադիր ուժ ունենալը նաեւ համալսարանների աշխատակազմերում փոփոխությունների դեպքում:

-- Բացառության կարգով եւ առանձին դեպքերում փախստական ուսանողներին տրամադրել հավելյալ օժանդակություն (ի լրումն կրթաթոշակների, որոնք սովորաբար ծածկում են գրանցման եւ ուսման վարձը, վարձակալության կամ կացարանի, ամսական սննդի կամ ապրուստի համար տրվող նպաստներ եւ տարեկան նպաստ գրքերի համար):

-- Ֆինանսական կամ բնախրային (ոչ դրամական) օժանդակություն տրամադրել կարիքավոր հետադարձական ուսում ստացողներին, ովքեր իրենց չեն կարող թույլ տալ դպրոցի հետ կապված այն ծախսերը, որոնք չեն ծածկվում կրթաթոշակներով (տրանսպորտ, գրքեր, սնունդ եւ այլն):

1.7 Աջակցություն փախստականների համայնֆաէեն դպրոցներին

Համայնֆաէեն դպրոցներին աջակցել այն իրավիճակներում, երբ կառավարությունը փախստականներին թույլ չի տալիս ներգրավել կրթության հանրային համակարգում:

-- Ապահովել, որ փախստականների դպրոցները առաջնորդվեն հավաստագրված ուսումնական պլանով: Այն իրավիճակներում, երբ կարեւորագույն առումով առկա է հայրենադարձման հավանականություն, խորհուրդ է տրվում հետեւել հայրենի երկրի ուսպլանին, որպէսզի երէխները տուն վերադառնալուց հետո կարողանան առանց ընդհաման շարունակել իրենց ուսումը: Տեղեկություններ հավաքել ուսպլանի վերաբերյալ, հնարավորության դեպքում եւ այն դեպքերում, երբ դա չի հանգեցնում պաշտպանվածության խնդիրների, ընդունող երկրի կրթության ոլորտի ղեկավարության հետ համագործակցել՝ ապահովելու նիւտ դասագրքերի առկայություն ու երաշխավորել, որ տրամադրվող հավաստագրերը ճանաչվեն նրանց հայրենիքում:

-- Այն հաստատություններում, որտեղ հստակություն չկա, թէ արդյոք փախստականները կարող են վերադառնալ տուն կամ՝ երբ կարող են վերադառնալ, ընդունող երկրի ուսպլանի կիրառումը նախընտրելի է, երբ սովորողները հանձնում են ԿՆ կողմից հավաստագրված ֆնուրյուններ: Օգտակար կլինի, եթէ հաստատությունում դասավանդեն թէ՛ փախստական, թէ՛ ընդունող համայնքների ուսուցիչներ: Տրամադրել տեղական դասագրքեր, կրթական ու ուսումնական նյութեր: Եթէ փախստականները չեն խոսում սովյալ կրթական համակարգում կիրառվող լեզվով, ապա հարկ է ապահովել լեզվի ուսուցման դասընթացներ:

-- Աջակցել դպրոցներին՝ գրանցվելու Կրթության նախարարությունում, որպեսզի դրանք հանաչվեն որպես հուսալի (*bona fide*) դպրոցներ, որոնք առաջարկում են պաշտոնապես հավաստագրված տարրական եւ միջնակարգ կրթություն:

-- Դպրոցներին աջակցել երկրում ընդունված կրթական ստանդարտներին հասնելու հարցում՝ սարքավորումների տրամադրման եւ ուսուցիչների վերապատրաստման միջոցով: Ուսուցիչների վերապատրաստման հարցում ՅՈՒՆԵՍԿՊ-ը եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հաճախ աջակցում են Կրթության նախարարությանը. համաձայնության հասնել ընթացիկ վերապատրաստման դասընթացներում փախստական ուսուցիչների ներգրավման շուրջ:

-- Աջակցել պատշաճ որակավորում ունեցող փախստական ուսուցիչներին պետական եւ մասնավոր դպրոցներում աշխատանք գտնելու հարցում: Անհրաժեշտության դեպքում ապահովել լեզվի ուսուցման դասընթաց:

-- Այն դեպքերում, երբ փախստական երեխաներին պաշտոնապես թույլատրված չէ դպրոց հաճախել, սատարել տնային ուսուցմանը՝ որպես միջանկյալ միջոցի: Որոշ երկրներում առկա է տնային ուսուցման պաշտոնական ծրագիր ավելի բարձր տարիքի երեխաների համար, ովքեր չեն հաճախել դպրոց. նման ծրագիրը կարող է համապատասխան լինել փախստականների դեպքում: Հավաստիանալ, որ այս ծրագրերի ավարտին երեխաները ստանան պաշտոնական հավաստագրեր:

2. ԻՆՏԵԳՐՈՒՄ

Հետամուտ լինել, որ փախստականների համար նախատեսված հարակաշուն կրթական ծառայություններն ինտեգրվեն տվյալ երկրի պետական համակարգում, երբ եւ որտեղ հնարավոր է:

ՄԱԿ ՓԳՀ-ի «Քաղաքային միջավայրում ֆաղափականության» առանցքը հետեւյալն է. աջակցել փախստականներին ծառայությունների հասանելիության հարցում՝ միաժամանակ նաեւ բարելավելով ծառայությունները տեղական համայնքի համար: Շեշտադրումը պետք է արվի բոլոր երեխաների, փախստականների եւ ընդունող համայնքի համար կրթության հասանելիության, որակի եւ պաշտպանության միասնական բարելավման վրա՝ ակնհայտ առավելություններ ապահովելով նրանց համար, ովքեր ապրում են փախստականներով խիտ բնակեցված տարածքներում: ՄԱԿ ՓԳՀ-ն ֆարգում է, որ ֆաղափաբնակ փախստականները հանրակրթության համակարգում արժանանան նույն վերաբերմունքին եւ միեւնույն կերպ, ինչ տեղի ֆաղափացիները, եւ ներառվեն պետական ռազմավարական պլանավորման շրջանակներում եւ դոնորներին ներկայացվող ծրագրերի առաջարկներում: Ծառայությունները կդառնան առավել հարակաշուն, եթե հնարավոր լինի կարողությունների ընդլայնման միջոցով փախստականների համար կրթությունը ներառել կրթության համապետական համակարգում, որն ունի կայուն եւ շարունակական ֆինանսավորում, եւ եթե հնարավոր լինի ապահովել ինչպես փախստականների, այնպես էլ տեղացիների հմտությունների ու գիտելիքի ներգրավումը:

Գործնական ֆայլեր դպրոցական ինտեգրումը խթանելու նպատակով

2.1 Աշխատանք տեղական առաջնորդների եւ հաստատությունների հետ

Խուսափել գուգահեռ կառուցվածքների ստեղծումից և խթանել փախստականների ինտեգրումը ազգային կրթական համակարգում:

-- Համապետական և տեղական իշխանությունների հնարավոր ամենալիարժեք ներգրավման միջոցով ապահովել պետության համամասնակցություն կրթական գործունեության պլանավորման, իրականացման և մոնիտորինգի հարցում:

-- Հիմնադրել հաղորդակցության և համակարգման արդյունավետ կառուցվածքներ՝ ստեղծելով ուղղորդման գործուն համակարգ, հետամուտ լինելով հասանելիության բարելավմանը, աջակցելով պետական հաստատությունների կարողության ամրապնդմանը և մոնիտորինգի ենթակառուցվածքային, թե ինչպես են փախստականներն օգտվում կրթության հնարավորություններից:

-- Նշյալ ծառայությունները տրամադրել ժամանակավորապես՝ գործելով համաձայնության ներքո, որի նպատակն է զարգացնել իշխանությունների կարողությունները, որպեսզի վերջովիչքո նրանք ինֆորմայն ապահովեն որակյալ կրթության այն դեպքերում, երբ որոշակի տարածքներում համարժեք պետական ծառայություններ չեն մատուցվում (տարածքի, որակավորված ուսուցիչների պակասի պատճառով):

2.2 Ներգծում պետության կողմից մատուցվող ծառայություններում

Գործընկերների հետ հետամուտ լինել, որպեսզի փախստականների կարիքներն ընդգրկվեն համապետական կրթական սահմանափակ ծրագրերում և դոնորներին ներկայացվող առաջարկներում:

-- Հետամուտ լինել, որ փախստականների համար պետական կրթական բուլսը հաստատություններն ու ծառայությունները նույնքան հասանելի լինեն, որքան տեղացիների համար:

-- Երկրում ՄԱԿ-ի թիմի և համապետական/տեղական կրթության համակարգման խմբերի/ ֆորումների միջոցով կառավարությունների, երկկողմ դոնորների, ՄԱԿ-ի գործակալությունների մոտ առաջ մղել փախստականների կրթությունը և պարզել դոնորների կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրեր, որոնք կարող են ներառել փախստականներին: Այսօրինակ ծրագրերը կարող են ընդգրկել տարրական կրթություն և կրթաբուհեր, ուսուցիչների վերապատրաստում որակի բարելավման նպատակով, դպրոց վերադարձնելու ծրագրեր հզնաժամից հետո և/կամ դպրոցական պարագաների ապահովում:

-- Ապահովել փախստականների կրթության ներառումը ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրում (ՄԱԿԶԱԾ) և Դիմումների համախմբված գործընթացում (ԴՀԳ):

-- Խթանել որակավորում ունեցող փախստական ուսուցիչների ներառումը պետական դպրոցական համակարգում:

-- Պատասխանել նախկինում ձեռք բերված կրթական որակավորումների (դիպլոմների և հավաստագրերի) հանաչումը:

-- Օգտագործել համակարգման գոյություն ունեցող մեխանիզմները նոր կամ գուգահեռ գործող մեխանիզմներ ստեղծելու փոխարեն:

-- Փախստականների համայնքահեն դպրոցներին աջակցել պետական ստանդարտներին համապատասխանելու և պայմանները բավարարելու հարցում՝ ԿՆ-ի կողմից գրանցում ստանալու համար:

2.3 Պետության կողմից մատուցվող ծառայությունների բեռի թեթևացում

Համապետական դպրոցական համակարգում ինտեգրումը խրախուսելուն գուզընթաց՝ ՄԱԿ ՓԳՀ-ն գիտակցում է, որ սրա արդյունքում կարող է մեծանալ պետական ծառայությունների բեռը, մասնավորապես, երե որոշակի ֆազաֆային տարածքներում առկա է փախստականների մեծ խտացում: Կրթության նախարարության և ֆազաֆային իշխանությունների հետ ֆննարկեֆ և որոշեֆ, թե ինչպես կարելի է լրացուցիչ աջակցություն ցուցաբերել՝ պետական դպրոցների կարողությունները մեծացնելու և ծառայությունների որակը բարելավելու համար: Պետք է նաե հաշվի առնել ընդունող համայնքի կրթական կարիֆները:

-- Օժանդակել կառավարությանը/ԿՆ-ին, որպեսզի հնարավորություն ստեղծվի՝ պետական դպրոցներում փախստական երեխաներին տեղավորելու համար այն տարածներում, որտեղ առկա է փախստականների մեծ կենտրոնացում:

-- Կրթության նախարարության (և, հարկ եղած դեպքում, ՅՈՒՆԻՍԵֆ-ի կամ որեէ իրականացնող գործընկերոջ) հետ համատեղ կատարել նախնական գնահատում՝ պարզելու համայնքում առկա կրթական կարիֆները, ինչպես ընդունող համայնքի երեխաների, այնպես էլ փախստականների համար, և աջակցել ընտրված դպրոցներում բարելավումների իրականացմանը՝ հանուն բոլոր երեխաների շահի:

-- Մեծացնել դպրոցում եղած դասարանների ֆանակը, որպեսզի հնարավոր լինի տեղավորել ավելի մեծ թվով սովորողների՝ ինչպես փախստական, այնպես էլ ընդունող համայնքի երեխաների: Վերականգնել շինությունները և/կամ բարելավել դպրոցի ընդհանուր միջավայրը:

-- Ապահովել, որ դպրոցական սարֆավորումներն ու պիտույֆները, ներառյալ՝ դասագրֆերը և ուսումնական նյութերը, բավարար լինեն՝ կամ դրանք տրամադրելու միջոցով, կամ դպրոցներին կապելով կրթական հատվածում գործող այլ մատակարարների հետ:

-- Կրթության նախարարության և ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ աջակցել ուսուցիչների վերապատրաստմանը կամ որակավորման բարձրացմանը երեխայակենտրոն մանկավարժության թեմայով: Հնարավորության դեպքում պետական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում ներգրավել նաե փախստական ուսուցիչներին: ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է ֆինանսավորել վերապատրաստման հավելյալ դասընթացների իրականացումը ԿՆ-ի գոյություն ունեցող վերապատրաստման դասընթացների հիման վրա:

-- Կրթության ոլորտի պատասխանատուներին/գործընկերներին ցուցաբերել նպատակային աջակցություն կառավարման հարցում՝ համապետական և տեղական կարողություններ ստեղծելու/ հզորացնելու նպատակով: Վերապատրաստման գոյություն ունեցող դասընթացներում ներառել փախստականների կարիֆների վերաբերյալ մոդուլ՝ փախստականների իրավիճակի ընկալումը խորացնելու նպատակով:

2.4 Արտակարգ իրավիճակներում արձագանքման բարելավում

Ապահովել արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի առկայությունը ֆազաբային տարածքներում փախստականների հնարավոր լայնածավալ ներհոսքի պարագայում:

-- Թեպետ այս ուղեցույցը գլխավորապես ստեղծված է փախստականներով բնակեցված այնպիսի ֆազաբային բնակավայրերի համար, որոնք չեն գտնվում արտակարգ իրավիճակի պայմաններում, այն կարող է կիրառելի լինել նաև ծայրահեղ եւ հակամարտությունների/ բնական աղետների անմիջապես հաջորդող իրավիճակներում, երբ տեղի է ունենում փախստականների մեծ ներհոսք ֆազաբային բնակավայրեր: Այսպիսի իրավիճակներում ՄԱԿ ՓԳՉ-ն եւ գործընկերները (այդ թվում՝ Կրթական կլաստերն այն վայրերում, որտեղ այն գոյություն ունի) պաշտպանում են արտակարգ իրավիճակներում կրթական ծառայություններից անվհար հիմունքներով օգտվելը եւ փախստականների ներառումը մարդասիրական ծրագրերի եւ արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորման մեջ:

-- Արտակարգ իրավիճակում կրթության ցանկացած պլանավորում պետք է շաղկապված լինի համապատասխան ավելի երկարաժամկետ կրթական միջամտությունների հետ՝ հարակալունություն եւ տեղերում մասնակցություն եւ պատասխանատվություն ապահովելու նպատակով:

2.5 Հնդուհող համայնքներում բնակվելը

Ակտիվորեն աջակցել տեղական համայնքներում փախստականներին ընդունելու, տեղացիների հետ միեւնույն իրավունքներից օգտվելու եւ միեւնույն կրթական ծառայություններին հասու լինելու հարցում: Նպատակը «սոցիալական համայնքավածության» մեծացումն է՝ կրթությունն իբրեւ խաղաղ գոյակցության գործիք օգտագործելու միջոցով:

-- Նոր ժամանած փախստականների համար կազմակերպել ներածական դասընթացներ եւ տեղեկատվական պարապմունքներ սնտեսական եւ սոցիալական իրավիճակի վերաբերյալ, ներառյալ պատմությունն ու մշակույթը, որպեսզի նրանք ծանոթանան ընդունող երկրին եւ իրենց ֆազաբային միջավայրի առանձնահատկություններին:

-- Անհրաժեշտության դեպքում կազմակերպել լեզվի ուսուցման դասընթաց սովորողների, ուսուցիչների եւ մեծահասակների համար՝ պլուրացնելու նրանց հաղորդակցումն ու ինտեգրումը:

-- Իրականացնող գործընկերների եւ փախստական համայնքի հետ իրագործել տեղեկատվական ֆարագարձավ՝ ընդունող համայնքներին, ներառյալ ուսուցիչները, սովորողները, ծնողները եւ համայնքի անդամները/ առաջնորդները, փախստականների խնդիրների նկատմամբ ավելի ընկալունակ ու զգայուն դարձնելու նպատակով, որպեսզի նրանք ավելի լավ գիտակցեն, թե ինչու են փախստականները լքել իրենց հայրենի երկիրը, եւ թե ինչ մարտահրավերների են բախվում նրանք:

-- Դպրոցներում խթանել սպորտը՝ որպես թիմի ձեւավորման, հանդուրժողականության խթանման, փոխօգնության եւ համագործակցության հարթակ:

-- Դպրոցական խորհուրդներին եւ տնօրեններին, Ուսուցիչ-ծնող սոցիալացիաներին (ՈւՄՍ), դպրոցների կառավարման կոմիտեներին աջակցել կառավարման եւ վերապատրաստումների հարցերում:

-- Կազմակերպել համատեղ արտադասարանական միջոցառումներ, մասնավորապես՝ մարզական եւ մշակութային, այդ թվում՝ դրամատիկ, բատերական եւ պարային, դպրոցական սպորտի օրեր եւ այլ՝ ուժադրությունը հատկապես սեւեռելով երիտասարդների համախմբելու ուղղությամբ, կազմակերպել միջոցառոցային մրցույթներ եւ այլ գործողություններ:

-- Հետամուտ լինել փախստական ծնողների ներկայացվածությունը ՈւՄԱ-ներում եւ կրթական այլ կոմիտեներում: Եթե տեղական օրենքներով դա չի բույլատրվում, ապա փորձե՛ք համաձայնության հասնել դիտորդի կարգավիճակի շուրջ:

3. ՈՐԱԿ

Հետամուտ լինել, որ փախստականներին առաջարկվող կրթությունը համապատասխանի ազգային եւ միջազգային ստանդարտներին եւ ապահովի անվտանգ եւ երեխայի համար բարենպաստ ուսումնական միջավայր, լավ կրթված ուսուցիչներ՝ երեխայակենտրոն մանկավարժության հիմնավոր խնացությամբ, բավարար եւ անհրաժեշտ սարքավորումներով հագեցած ենթակառուցվածքներ ու շենքային պայմաններ:

Որակը կրթության առանցքն է, եւ այն, ինչ տեղի է ունենում դասառնյակներում եւ կրթական այլ միջավայրերում հիմնավորապես կարելու է երեխաների, երիտասարդների եւ չափահասների ապագա բարօրության տեսանկյունից: Որակյալ կրթությունն է սովորողներին ապահովում բանիմացության՝ իրենց տարիքին համապատասխան մակարդակով, զարգացնում նրանց վստահությունը եւ օժտում իրենց կյանքի ընթացքում առաջ ընթանալու կարողությամբ:

Գործնական քայլեր որակի բարելավման նպատակով

3.1 Վերապատրաստում, մասնագիտական զարգացում եւ աջակցություն

Ապահովել որակյալ դասավանդում եւ ուսումնասություն, որը հաշվի է առնում երեխաների սոցիալ-հոգեբանական կարիքները, նրանց իրավունքները եւ անհատական զարգացումը, որպես սովորողներ՝ նպատակային դասընթացների, ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ աջակցության այլ համապատասխան մեխանիզմների միջոցով:

-- Խորհրդակցել կրթության բնագավառի գործընկերների հետ՝ պարզելու, թե ուսուցիչների ուսուցման ինչպիսի դասընթացներ արդեն գոյություն ունեն, մասնավորապես՝ ինչպիսի համապետական ուսուցում է տրամադրում Կրթության նախարարությունը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլոց օժանդակությամբ:

-- Հետամուտ լինել, որ վերապատրաստում անցնեն այն դպրոցների ուսուցիչները, ուր հաճախում են փախստականներ, եւ աջակցել երեխայակենտրոն մանկավարժության, ինքնավերլուծող դասավանդողի դերի, գենդերային ընկալունակության եւ դպրոցական վարժականի վերաբերյալ վերապատրաստման եւ որակավորման բարձրացման դասընթացների անցկացմանը:

-- Ուժադրությունը սեւեռել ուսուցման ինտերակտիվ մեթոդների եւ խաղերի ու սպորտի վրա՝ ինչպես փոփոխասակ, այնպես էլ ավելի բարձր տարիքի երեխաների դեպքում:

-- Ապահովել, որ դասավանդման եւ ուսումնառության գործընթացները լինեն երեխայակենտրոն, մասնակցային եւ ներառական:

-- Ուժադրությունը սեւեռել ինքնավստահության, բանակցային հմտությունների եւ հաղթահարման վարքագծի ձեւավորման եւ զարգացման վրա՝ կյանքի հմտությունների ինտեգրված կրթության միջոցով:

-- Հասանելի դարձնել ուսումնական նյութերը եւ դասավանդման ուղեցույցները, կազմակերպել սովորողներին ակտիվացնող դասարաններ: Ուժադրությունը սեւեռել գեղեցիկ առումով զգայուն ուսումնառության վրա եւ սրամադրել դասավանդման եւ ուսման համապատասխան նյութեր:

-- Նպաստել սովորողների ակտիվ մասնակցությանը՝ սովորողների կոմիտեների ստեղծման եւ տարեկիցների կողմից դասավանդում կազմակերպելու միջոցով:

3.2 Ապահովել վաղ մանկական տարիքի երեխաների կրթություն

Պարզել վաղ մանկական տարիքի երեխաների կրթության հնարավորությունները՝ առավելագույնի հասցնելու երեխաների ներուժը եւ վաղ զարգացումը, ապահովելու նրանց պաշտպանությունը եւ դյուրացնելու անցումը դեպի տարրական կրթություն:

-- Այլ նախաձեռնություններում եւ ծրագրերում ներգրավել վաղ խնամքի եւ ծնողական խմբերը, խաղային խմբերը եւ մանկապարտեզը եւ կապ հաստատել առողջապահական եւ սննդային ապահովման ծառայությունների հետ:

-- Կրթական ոլորտի այլ գործընկերների հետ աջակցել վաղ մանկական տարիքի երեխաների համայնֆահեհ կրթության ձեւավորմանը: Սա փոքր ծախսեր պահանջող միջոց է՝ համայնքի անդամներին երեխայի պաշտպանության եւ զարգացման գործընթացներում ներգրավելու համար:

-- Կրթական ոլորտի այլ գործընկերների հետ կազմակերպել վաղ մանկական տարիքի երեխաների կրթություն սրամադրողներին/ մանկապարտեզների դաստիարակների վերապատրաստման դասընթացներ: Այդ նպատակի համար հնարավորինս օգտվել գոյություն ունեցող դասընթացներից:

-- Ստեղծել հնարավորություններ, որպեսզի տեղացի երեխաները հնարավորին չափ շփվեն (խաղան եւ սովորեն) փախստական երեխաների հետ:

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փախստականների համայնքների ներսում առկա ամենախոցելի խմբերի եւ անհատների, ներառյալ՝ բաժանված ծնողների երեխաների եւ ծնողազուրկ երեխաների, ոխկի ենթակա կանանց եւ աղջիկների, տարեցների, հաճախողություն ունեցող անձանց եւ հատուկ կրթական կարիքներ ունեցող փախստականների համար ապահովել պաշտպանություն եւ հատուկ օժանդակություն, որպեսզի նրանց համար կրթությունը հասանելի լինի համահավասար եւ արդարացի պայմաններով, ապահով ուսումնական միջավայրերում:

Քաղաքային միջավայրում, առանց կրթության հնարավորությունների, երիտասարդները և հասկապես աղջիկներն ու երիտասարդ կանայք ավելի հավանական է, որ բախվեն բռնության, չարաշահման և շահագործման այլ ձևերի, ներառյալ ստիպողական աշխատանքի անցնելը, մանկական աշխատանք, սեռական բռնությունը, թմրանյութերից կախվածությունը կամ հարբեցողությունը: Հաճախ գերիշխում է գենդերային անհավասարությունը. կրթությունը կարող է կարելու դերակատարում ունենալ դպրոցում գենդերային հավասարության ապահովման համար, երեխաների և երիտասարդների շրջանում գենդերային հավասարության խնդիրների ընկալում գարգացնելու և երեխաների ու երիտասարդների շրջանում կյանքի հմտությունները արմատավորելու առումով, ինչը կամրապնդի այլոց հետ հարաբերվելու և իրենց պաշտպանելու նրանց կարողությունը:

Կենսապահովման միջոցների և եկամտի պակասը կարող է երիտասարդներին մղել գոյությունը պահպանելու համար սեռական կապերի հաստատման կամ սնունդային շահագործման հետ կապված այլ հակաօրինական գործողությունների: Համատարած աղքատությունը, աղքատիկ կենսամիջոցները, ցածր եկամուտը և ծնողների անկարողությունը՝ հոգալու ուսման, համագգեստի, գրքերի, ուսուցիչների փոխհատուցման կամ փոխադրամիջոցների ծախսերը, բազմաթիվ երիտասարդ փախստականների դեպքում նվազեցնում են կրթության հասանելիության հնարավորությունները: Տարրական կրթությունն ավարտելուց հետո նրանք հաճախ բախվում են հետտարրական կրթության հնարավորությունների ընդհանուր պակասի խնդիրին՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ հատվածներում: Դպրոց հանախող երեխաների և երիտասարդների դեպքում վնասակար կրթություն ունի անվտանգ ուսումնական միջավայրի ապահովումը. առանձնահատուկ, վերահսկվող ուսուցչություն պետք է հասկացնել դպրոցների և ուսումնական այլ միջավայրերի ապահովության և պաշտպանության երաշխավորմանը:

Գործնական քայլեր պաշտպանության ընդլայնման նպատակով

4.1 Անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծում⁸

Ապահովել, որ դպրոցները լինեն ապահով և անվտանգ, խթանեն սովորողների և ուսուցիչների պաշտպանվածությունը և սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը, և գերծ լինեն այնպիսի խոչընդոտներից, որոնք երեխաներին կխանգարեն դասերի հանախող կամ կատիպեն դուրս մնալ դպրոցից: Նշվածը ներառում է ֆիզիկական միջավայրը, անվտանգության նկատառումները և սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը:

-- Ապահովել, որ դպրոցները լինեն անվտանգ և հասանելի, պաշտպանական սահմաններով առանձնացված, և ունենան բավարար դասասենյակային տարածք և սովորողների նստելու հարմարություններ: Աջակցություն տրամադրել վերանորոգման անհրաժեշտ աշխատանքների իրականացման, պաշտպանական պատերի և ցանկապատերի կառուցման, դասասենյակների համալրման և դպրոցական պարագաների (գրասեղաններ, աթոռներ, գրատախտակներ և այլն) տրամադրման հարցում:

-- Դպրոցներին աջակցել պետքարանների կառուցման և մեկուսացվածության, արժանապատվության ու անվտանգության ապահովման հարցում: Տղաների և աղջիկների համար նախատեսված առանձնացված

⁸ Էլեկտրոնային ուսուցման ծրագիր անվտանգ ուսումնական միջավայրի վերաբերյալ [E-Learning Programme on Safe Learning Environments], ՄԱԿ ՓԳՀ, 2011 թվական

պետք արժեքները, որոնք կարող են կողմնակից (կանխարգելելու սեռական հետապնդումներն ու բռնությունը), պետք է տեղակայված լինեն ապահով, հարմար և հեշտ հասանելի վայրերում: Ուսուցիչների համար առանձին պետք արժեքների ապահովումը կարևոր գործոն է նրանց շահագրգռելու տեսակետից:

-- Ապահովել երեխաների անվտանգությունը դպրոց մտնելիս և դպրոցից դուրս գալիս և այս նպատակով, անհրաժեշտության դեպքում, կազմակերպել համայնֆային ուղեկցություն:

-- Կին ուսուցիչների ներկայությունը կարևոր է աղջիկների կողմից դպրոց հաճախելը պահպանելու և շահագործումից նրանց զերծ պահելու առումով: Ապահովեք, որ պահպանվի դպրոցում աշխատող կին և տղամարդ ուսուցիչների հավասարակշռությունը: Այնտեղ, որտեղ իրական դժվարություն կա կին ուսուցիչ գտնելու, հարկ է ապահովել ուսուցիչների կին օգնականների ներկայություն՝ մինչ լուծումներ կգտնվեն կին ուսուցիչների հայտնաբերման/ վերապատրաստման առումով:

-- Ապահովել, որ ուսուցիչների վարձավանդը մշակվի համայնքի հետ համատեղ, ստորագրվի յուրաքանչյուր ուսուցչի կողմից և օգտագործվի հաշվետվողականության ապահովման նպատակով:

-- Պարզել փախստական երեխաների դպրոցում ինտեգրման խոչընդոտները, ներառյալ՝ խտրականությունը, հասակակիցների հետապնդումները և ռասիզմը, կազմակերպել ընկալունակության բարձրացման և իրազեկման դասընթացներ ուսուցիչների, սովորողների և համայնքի անդամների համար և ծրագրել պարբերական համատեղ գործողություններ տեղացիների և փախստականների համայնքի մասնակցությամբ: Այս միջոցառումների կազմակերպման մեջ կենտրոնական դերում պետք է ներգրավված լինեն ինչպես տեղական, այնպես էլ փախստականների համայնքը ներկայացնող սովորողներ:

-- Ապահովել համայնքի և դպրոցի անդամների լիարժեք մասնակցությունը բոլոր գործողություններին՝ ուղղված դպրոցական միջավայրի բարելավմանը՝ հաշվի առնելով կրթության որակի բարձրացումը:

-- Ապահովել, որ ֆիզիկական կառուցվածքները և շինությունները նետորեն կառուցված լինեն և պատշաճ տարածք նախատեսեն վարչական, հանգստի և սանիտարական հանգույցների համար: Դպրոցներին սատարել գրադարանների, լաբորատորիաների, մարզադահլիճների, խաղահրապարակների, կենցաղային աղբի հեռացման (աղբամանների և աղբամբարների միջոցով) և, անհրաժեշտության դեպքում, ջրահեռացման համակարգերի կառուցման հարցում:

-- Խթանել ջրի օգտագործման և հիգիենայի պահպանման ապահով գործելակերպերը, ինչպիսիք են ձեռքերի և դեմքի լվացումը: Աղջիկների համար ապահովել օճառ և սանիտարական նյութեր/միջադիրներ:

-- Պարզել երեխաների ընդհանուր բարեկեցության աղբյուր ծառայած խոչընդոտները: Կապ հաստատել դպրոցներում տեղակայված առողջապահական և սննդի ապահովման, այդ թվում՝ մակաբուծային վարակների բուժման նպատակով սնուցման և հիմնարարական ծառայությունների հետ, ապահովել սննդային միկրոսոբիոլոգիաներ և վարակիչ հիվանդությունների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, կարմրուկ, փորլուծություն) կանխարգելում առողջապահական հատվածի ռեսուրսներով (տես ուղեցույցների Մոդուլ 1-ը):

-- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնվեն կրթական հաստատությունները նախագծելիս՝ կապված հասանելիության ապահովման (մուտքի եւ ելքի), դասասենյակների տարածքի եւ կահույքի, եւ ջրի ու սանիտարական հարմարությունների հետ:

4.2 Գեներային հավասարության ապահովում

Ուշադրության առնել աղջիկների եւ տղաների տարբեր կարիքները եւ ապահովել նրանց ներգրավումը, մասնակցությունը եւ առաջադիմությունը ուսումնական միջավայրում:

-- Աշխատել համայնքների հետ՝ պարզելու գոյություն ունեցող ֆաղափականությունները, մշակույթները եւ գործելակերպերը, որոնք ազդում են կրթության վրա, եւ բարձրացնել իրազեկության մակարդակը՝ լուծում տալու իգական եւ արական սեռի բոլոր սովորողների տարատեսակ խնդիրներին, բավարարելու նրանց կարիքներն ու ամրապնդելու կարողությունները:

-- Տեղյակ լինել տեղական հավատալիքներին եւ սովորույթներին եւ խթանել երկխոսություն ու մասնակցություն՝ բարելավելու ծրագրերի որակը եւ ապահովելու, որ զգայուն հարցերը լուծում ստանան այնպես, որ մշակութային առումով ընդունելի լինեն տեղական միջավայրում:

-- Աշխատել երիտասարդ կանանց եւ տղամարդկանց, տղաների եւ աղջիկների հետ՝ պարզելու պատասխանատվության խնդրի հետ կապված կարիքները եւ ուսումնառության խոչընդոտները, որոնք տարբեր են արական եւ իգական սեռի սովորողների համար, ինչպես նաեւ ուսուցիչների համար: Ամրապնդել պատասխանատվությանը եւ կանխարգելմանն ուղղված ծրագրային միջամտությունները՝ ստեղծելու անվտանգ եւ նպաստավոր միջավայր, որպեսզի բոլոր փախստականներն ընդգրկվեն եւ մնան կրթության համակարգում:

4.3 Պատասխանատվություն ապահովող գործողությունների կազմակերպում

-- Դիտարկել դպրոցից/գյուղից դուրս մնալու պատճառները եւ այս խնդրի լուծման համար աշխատել դպրոցի եւ ողջ համայնքի հետ:

-- Ձեռավորել թաղային կոմիտեներ՝ երեխաներին դպրոց ուղեկցելու համար:

-- Ավագ երեխաների համար դասերը կազմակերպել տներում, եթե հանրային դպրոցները հասանելի չեն (հեռավորության եւ այլ պատճառներով): Այդ նպատակով օգտագործել կառավարության գոյություն ունեցող ծրագրերը:

-- 3-ից տարեկանից փոքր երեխաների համար կազմակերպել համայնքային ցերեկային խնամք:

-- 3-5 տարեկան երեխաների համար կազմակերպել վաղ մանկական տարիքի կրթություն:

-- Ցերեկային խնամքի ծառայություն ապահովել այն մայրերի համար, որոնք ցանկանում են հաճախել դասերի/դասընթացների:

-- Աջակցել դասերից հետո գործող ակումբներին (մարզական, թատերական, զվարճանքի):

-- Նպաստել երիտասարդների ներգրավմանը երիտասարդական ակումբներում:

-- Կազմակերպել միջոցառումներ դպրոցական արձակուրդների ընթացքում (ամառային ճամբարներ տեղական համայնքի հետ, բաց թողածը լրացնող դասեր, լեզվի ուսուցման դասեր, մարզական միջոցառումներ եւ այլն):

-- Պարզել մասնավոր հատվածում երիտասարդների կրթության հնարավորությունները (SS դասընթացներ, մասնագիտական վերապատրաստում, հիմնական հմտությունների զարգացում եւ այլն): Կապ հաստատել առողջապահության, պաշտպանության եւ կենսամիջոցների ապահովման ոլորտներում իրականացվող գործողությունների հետ:

-- Աջակցել տարեկիցների կողմից իրականացվող մոնիտորինգին եւ կամավորական կազմակերպությունների ու անվտանգության ցանցերի հիմնադրմանը:

4.4 Խոցելի անհատների եւ հատուկ կարիքներով անձանց հայտնաբերում

Ստեղծել, կիրառել մի քափանցիկ համակարգ՝ հայտնաբերելու խոցելի փախստականներին եւ հատուկ կարիքներ ունեցող անձանց, տարածել այդ համակարգի մասին տեղեկությունը: Խոցելի փախստականները եւ ընտանիքները սովորաբար հայտնաբերվում են ՄԱԿ ՓԳՀ-ի համայնքային ծառայությունների/ պաշտպանության/ կրթական բաժինների անձնակազմերի եւ գործընկերների կողմից իրականացվող հարցազրույցների եւ/կամ սոցալից աջակցության միջոցով:

-- Հատուկ ուշադրություն հատկացնել նախաձեռնություն հանդես բերելով ապահովելուն, որ հաճախումներն ունեցող երեխաների համար կրթությունը լինի հասանելի, ինչպես տարածքի ֆիզիկական կազմակերպման առումով, երբե կա նման անհրաժեշտություն, այնպես էլ դպրոցներում տարբեր կարողություններ ունեցող երեխաների նկատմամբ դրական մոտեցման խթանման:

-- Օգտագործել ՄԱԿ ՓԳՀ-ի գոյություն ունեցող՝ համայնքները ներգրավող մեխանիզմները՝ հայտնաբերելու այն անհատներին եւ ընտանիքներին, որոնք կրթական կարիքներ ունեն, սակայն անկարող են վճարել ուսման վարձը կամ հոգալ առնչվող ծախսերը, կամ երբ այլ հանգամանքներ նրանց հատկապես խոցելի են դարձնում:

-- Փախստական համայնքների առաջնորդների/ցանցերի միջոցով պարզել եւ ընտրել խոցելի խմբերին/ անձանց:

-- Մշակել քափանցիկ եւ չափելի չափանիշներ՝ հայտնաբերելու հատուկ կարիքներով երեխաներին, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանական կարիքներով եւ հաճախումներն ունեցող երեխաներին:

-- ՄԱԿ ՓԳՀ-ի իրականացնող գործընկերների եւ համայնքապետ կազմակերպությունների միջոցով հայտնաբերել հատկապես խոցելի անհատներին եւ ընտանիքներին, որոնք աջակցության եւ հետազոտում շարունակական ուշադրության կարիք ունեն: Այն դեպքերում, երբ փախստականները ցրված են ֆաղափի ողջ տարածքով, կարող է որոշ ֆինանսական եւ նյութատեխնիկական աջակցության կարիք լինել փոխադրամիջոցների համար, որպեսզի հատուկ կարիքներով անձանց համար դպրոցները հասանելի լինեն:

4.5 Հատուկ օգնության ծրագրերի հիմնում

Ապահովել հատուկ օգնության ծրագրերի առկայությունն ըստ նշված կարիքների:

-- Հնարավորության դեպքում խնդրել գործընկեր որեւէ կազմակերպության, որպեսզի վերջինս ստանձնի ֆազաբենակ փախստականների համար ՄԱԿ ՓԳՀ-ի հատուկ օգնության ծրագրերի (ընթացակարգերի) կառավարումը:

-- ՄԱԿ ՓԳՀ-ի հատուկ օգնության ցանկում գրանցված անձանց օգնել ֆինանսական եւ բնախրային եղանակներով, ներառյալ՝ վնասված ուսման վարձը, փոխհատուցելով տրանսպորտի, գրքերի, համագրեւտի, սննդի եւ այլ ծախսերը:

-- Ապահովել, որ պաշտպանության, համայնքային ծառայություններում, առողջապահության, կրթության, կենսամիջոցների ապահովման եւ այլ հատվածներում գործունեություն ծավալող ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցներն իրենց աշխատանքը համակարգեն եւ կազմակերպեն այնպես, որ հնարավորության դեպքում միեւնոյն իրականացնող գործընկերը տրամադրի հատուկ օգնության ընթացակարգեր տարբեր ոլորտներում՝ առաջնորդվելով ֆազաբենակ փախստականների մեկ միասնական ցուցակով:

4.6 Այլ ոլորտների հետ համակարգումը

Համագործակցությունը կրթության հատվածի շրջանակներում եւ այլ հատվածների հետ միևնույն է կրթական ծրագրերի իրականացման որակի, համապարփակության եւ օգտակարության առավելագույն մակարդակի ապահովման առումով: Սա ներառում է սերտ աշխատանք հետեւյալ ոլորտների հետ.

-- Պաշտպանության ոլորտի հետ՝ իմանալու սեռական եւ գենդերային հիմքով բռնության վտանգների մասին եւ տեղեկություններ հավաքելու դիսկի ենթակա բնակչության վերաբերյալ, ներառյալ՝ ծնողազուրկ երեխաները եւ ֆազաբային համայնքների այլ խոցելի խմբերը: Պարզել կրթության հասանելիության ապահովման խոչընդոտները եւ առկա սոցիալական ու սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունները: Կարեւոր է հասկանալ իրավական դատը եւ գործադրել շահերի պաշտպանությանն ուղղված համակարգված ջանքեր՝ խնդրով մտահոգ գործընկերների հետ:

-- Առողջապահության եւ սնուցման ոլորտների հետ՝ համակարգելու դպրոցական սնուցման եւ կերակրման ծրագրերը եւ տեղեկանալու առկա հիմնական կանխարգելիչ առողջապահական ծառայությունների մասին, սեռական ու վերականգնողական առողջության, ինչպես նաեւ ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման, խնամքի եւ աջակցության ծառայությունների մասին:

-- Ջրի, սանիտարական պայմանների եւ հիգիենայի (WASH) ոլորտի հետ՝ ապահովելու, որ ուսումնական տարածքներում առկա լինեն հուսալի ջրամատակարարում եւ ըստ սեռի առանձնացված սանիտարա-հիգիենիկ հարմարություններ:

-- Կենսամիջոցների ապահովման ոլորտի հետ՝ տեղեկանալու զբաղվածության բնագավառում համապետական ֆազաբայնությունների եւ կենսամիջոցների ապահովման հնարավորությունների, եկամուտների ստեղծմանն ուղղված

գործողություններին, միկրոֆինանսավորման եւ վարկավորման առկա սխեմաների եւ մասնագիտական դասընթացների մասին:

5. ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործընկերություններ հիմնել դերակատարների շայն շրջանակի հետ, մասնավորապես՝ կառավարությունների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների, միջազգային կազմակերպությունների, ՈԿԿ-ների, ֆաղաֆաջիական հասարակության եւ համայնֆային կազմակերպությունների, կրթական եւ մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու փախստականների համար որակյալ կրթական ծառայությունների հասանելիությունը:

Հարկ է, որ ՄԱԿ ՓԳՀ-ն ավելի շատ աշխատի կառավարություններին եւ կրթական բնագավառի համապետական իշխանություններին հետ եւ գրավի զարգացման ոլորտի գործընկերներին, որպեսզի հնարավոր լինի սահուն անցում կատարել արտակարգ եւ մարդասիրական օգնության իրավիճակներից դեպի կայուն զարգացում: Ինչ վերաբերում է ֆաղաֆային բնակավայրերի փախստականների կրթությանը, կարելու է ֆարսեզագրել կրթության բնագավառի բոլոր շահագրգիռ կողմերին, որոնք կարող են կազմակերպության օգնել իր մանդատի իրագործման հարցում եւ միեւնույն ժամանակ հող նախապատրաստել ծրագրի ամփոփման եւ հանձնման արդյունավետ գործընթացի համար:

Գործնական ֆայլեր գործընկերությունների ստեղծման, ամրապնդման եւ համակարգման նպատակով

5.1 Փախստականների համար կրթական ծառայությունների համակարգում

Ապահովել համաձայնեցված գործողություններ կրթության նախարարության, գործընկեր գործակալությունների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ՝ ուղղված շահերի պաշտպանության եւ ծրագրերի պլանավորման համատեղ գործողությունների իրականացմանը՝ փախստականների համար նախատեսված ծառայությունները ազգային կրթական համակարգում ինտեգրելու համար:

-- Կառավարական, դոնորային եւ ՄԱԿ-ի մակարդակներում գտնել ավելի ընդգրկուն համակարգման մեխանիզմներ՝ մասնակցելու եւ հետամուտ լինելու, որ ազգային կրթական համակարգում բավարարվեն ֆաղաֆային փախստականների կարիքները:

-- Համակարգմանն ուղղված այս հանդիպումներն օգտագործել որպես պլատֆորմ՝ առաջ մղելու բարելավված ծառայությունները, որոնք հաշվի են առնում կրթության հասանելիության այնպիսի գործոններ (դետերմինանտներ), ինչպիսիք են աղքատության ընդհանուր խնդիրները (կանոնավոր եկամտի բացակայություն, պարենային անապահովություն, թերսնում եւ բնակարանային ապահովության եւ կենսապահովման միջոցների ստեղծման հնարավորությունների սակավություն):

-- Ծանաչել եւ ամրապնդել կառավարության (ԿՆ եւ խնդրին առնչվող այլ նախարարություններ) դեկավար դերը: Համակարգման ցանկացած մեխանիզմ պետք է խթանի ազգային (տվյալ երկրի) առաջնությունները:

- Մասնակցել ԿՆ-ի կամ ֆաղաֆային իշխանությունների կողմից կազմակերպված հանդիպումներին, որոնցում ֆինանսավորման եւ ֆաղաֆային անապահով խավի, ներառյալ փախստականների կարիքները:

- ՄԱԿ ՓԳՀ-ն կառավարության ներկայացուցիչների հետ կարող է համաձայնագրվել ժողովներում, որոնք վերաբերում են ֆազաբային փախստականների կրթության կոնկրետ խնդրին:

-- Հետամուտ լինել, որ փախստականների նկատմամբ կիրառվեն սոցիալական ապահովության միեւնույն համակարգերը, ինչ էլ տեղի ֆազաբայինների դեպքում, և ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ սերտորեն համակարգել, որպեսզի ֆազաբային բնակավայրերում տեղացիներին ուղղված կրթական նախաձեռնությունները միեւնույն կերպով ծառայեն փախստականներին:

-- ՄԱԿ ՓԳՀ-ի կենսամիջոցների ապահովման, առողջապահության, համայնֆային ծառայությունների, պաշտպանության և այլ ոլորտներում աշխատող անձնակազմերի հետ սերտորեն համակարգել ջանքերը՝ առաջնորդվելով բազմագործառնության թիմի մոտեցմամբ:

5.2 Գործընկեր գործակալությունների դերերը

5.2.1 Շահագրգիռ կողմերի վերլուծության իրականացում և գործընկերների դերերի սահմանում

-- **Երկրների կառավարություններ.** ֆազաբակահանությունների մշակման ուղղորդում և ընդհանուր համակարգում, որակավորումների և դպրոցների ֆանաչում, վերապատրաստում, աջակցություն և ղեկավարում, ուսուցիչների վերապատրաստում և որակավորման բարձրացում, տեղական ուսպլանի մշակում:

-- **Ուսումնական հաստատություններ.** հասանելիություն և փախստականների ներգրավում, որակյալ կրթություն և երեխայի պաշտպանություն, ապահով դպրոցներ և ուսումնական միջավայրեր, ենթակառուցվածքներ և սարքավորումներ, դասավանդման և ուսումնական նյութեր, լեզվի ուսուցման դասընթացներ, բաց թողածը լրացնելու հարցում աջակցություն, արագացված ուսումնական ծրագրեր, համայնֆային իրազեկման և ինտեգրման գործողություններ, Բաց և հեռավար ուսուցման ծրագրեր:

-- **Դոնորային համայնք.** կրթական ոլորտին ուղղված ֆինանսավորման հատկացում կառավարություններին, ծրագրային օժանդակություն ՄԱԿ ՓԳՀ-ին և ՈԿԿ գործընկերներին, ներդրում ֆազաբակահանության մշակմանն ուղղված երկխոսության մեջ, փախստականների ինտեգրում ազգային կրթական համակարգում, կրթաթուշակներ:

-- **ՄԱԿ-ի գործակալություններ.** շահերի պաշտպանություն, փախստականների ֆինանսավորում կրթության նպատակով, վերապատրաստման հարցում օժանդակություն, ներդրում ֆազաբակահանության մշակմանն ուղղված երկխոսության մեջ, փախստականների ինտեգրում ազգային կրթական համակարգում, աջակցություն Կրթության նախարարությանը:

-- **ՈԿԿ գործընկերներ.** շահերի պաշտպանություն և համակարգում, վերապատրաստում, աջակցություն և ղեկավարում, լեզվի ուսուցման դասընթացներ, բաց թողածը լրացնելու հարցում աջակցություն, ՏՀՏ ծրագրեր, համայնքի ընկալունակության մեծացում և իրազեկման գործողություններ:

-- **Փախստականների համայնքներ.** ներգրավում Ուսուցիչ-ծնող ասոցիացիաներում/ կրթական կոմիտեներում, շահերի պաշտպանություն, դպրոցների հսկողություն, ֆինանսական և նյութական/ բնաիրային աջակցություն, ուսման վարձեր և ուսումնառությանն առնչվող ծախսեր, արտադասարանային գործունեության կազմակերպում:

-- **Մասնավոր հատված.** աջակցություն փախստականներին ուսուցման (վերապատրաստման) և աշխատության (փորձնակության) հնարավորությունների ստեղծման միջոցով, տեղավորում տեխնիկական հաստատություններում, մասնագիտական ուսուցման կենտրոններում և մասնավոր ձեռնարկություններում, ֆինանսավորման տրամադրում և բնաիրային նվիրատվություններ, կրթաթուղթեր հիմնադրամների և տեղական/միջազգային ընկերությունների միջոցով:

-- **Կրթական կոմիտեներ.** աշխատանքները, այլուց թվում, ներառում են՝ աջակցություն դեկավարներին և ուսուցիչներին դպրոցի կառավարման հարցում, երեխաների ուսումնական առաջադիմության մոնիտորինգ, արտադասարանային գործունեության կազմակերպում, կարգուկանոնի և ապահով ուսումնական միջավայրի ստեղծման և պահպանության հարցում աջակցություն, համայնքի մասնակցության կազմակերպում:

5.2.2 Միջազգային այլ գործակալությունների հետ գործողությունների սերտ համակարգում և աջակցություն ԿՆ այն ծառայություններին, որոնք պետք է հասանելի լինեն նաև փախստականներին

-- ՄԱԿ ՓԳՀ-ն ներգրավվում է ազգային մակարդակով համակարգման և սվյալ երկրում ՄԱԿ-ի թիմի կողմից համակարգման մեխանիզմների և գործընթացների տրամադրած հնարավորություններում՝ կապված ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿԶԱԾ) և Դիմումների համախմբված գործընթացի (ԴՀԳ) հետ:

-- Հանախ ՅՈՒՆԻՍԵՖ-ը (ՄԱՄՀ) տեղերում առաջնորդող գործակալությունն է կրթության բնագավառում և կարող է ֆադաբանակ փախստականների կրթության հարցում աջակցություն տրամադրել շահերի պաշտպանության, ռեսուրսների հավաքման, նախնական գնահատման, պլանավորման և մոնիտորինգի, վաղ մանկական տարիքի կրթության, տարրական և միջնակարգ մակարդակների առկա կրթական նախաձեռնություններում փախստականների ներառման հարցերում, ռազմավարությունների, գործիքների և աջակցության տրամադրում փորձարկված այնպիսի ծրագրերի համար, ինչպիսիք են համայնքահեն վաղ մանկական տարիքի կրթության նախաձեռնություններն ու արագացված ուսուցման ծրագրերը:

-- ՅՈՒՆԻՍԵՖ-ը, «Փրկենք երեխաներին» կազմակերպության հետ միասին, Միջգերատեսչական համակարգող կոմիտեի [Inter-Agency Standing Committee, IASC] Կրթական կլաստերի համադեկավարն է՝ ուսուցողական առանցքում պահելով արտակարգ իրավիճակներում կրթության տրամադրումը, եթե տեղի է ունեցել որեւէ հզգաժամ կամ բնական աղետ, ինչպես նաև վերականգնման և վերակառուցման փուլերում կրթական համակարգերի ամրապնդման հարցում աջակցությունը:

-- ՅՈՒՆԻՍԵՖ-ը կարող է կարելուր գործընկեր լինել նաև կառավարության (ԿՆ-ի) հետ ծրագրի հանձնման ընթացակարգերը բնարկելու և դրանց շուրջ համաձայնության գալու, ինչպես նաև միջազգային այլ շահագրգիռ կողմերի հետ կապեր հաստատելու հարցում:

-- ՅՈՒՆԵՍԿՕ-ն ՄԱԿ-ի շրջանակներում կրթության ոլորտում պատշաճ կերպով մանկատան ունեցող կազմակերպությունն է եւ կարելու գործընկեր է շահերի պաշտպանության, կառավարության հետ գործողությունների համակարգման, կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի, ներառյալ՝ տվյալների հավաքագրման եւ վերլուծության, հետազոտությունների եւ հրատարակությունների, ուսուցանի մշակման եւ ուսուցիչների վերապատրաստման ուղղություններով կարողությունների զարգացման հարցում: ՅՈՒՆԵՍԿՕ-ն նաեւ տրամադրում է բարձրագույն կրթության կրթաթոշակներ:

-- Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) կարող է փախստականներին ներառել իր դպրոցական սնունդի ծրագրում եւ համայնֆային այլ ծրագրերում, որոնք սնունդ են ապահովում խոցելի անձանց, ներառյալ հատուկ կարիքներով երեխաները եւ այլ անձինք, ովքեր ընտրվել են որպես հատուկ օգնության կարիք ունեցողներ:

-- ՄԱԿ-ի «Հարիթա» կազմակերպությունը [HABITAT] գուցե ցանկանա գործակցել ՄԱԿ ՓԳՀ-ի հետ դպրոցի/ դասասենյակների կառուցման եւ վերականգնման ծրագրերի իրականացման հարցում:

5.2.3 Իրականացնող գործընկերոջ ծառայությունների ներգրավում ֆազային կրթության ծրագրի կառավարման համար

-- Իրականացման գործընկերոջ դերը ներառում է հետևյալը.

- Որոշարկել դպրոցներն ու ծառայություններ մատուցողներին, բանակցությունների միջոցով կայացնել համաձայնություններ եւ տեխնիկական խորհրդատվություն տրամադրել փախստականներին ընդունող հաստատություններին:
- Մշակել եւ իրականացնել հաղորդակցության եւ տեղեկատվության ռազմավարություն՝ փախստականների համայնքների շրջանում առաջ մղելու կրթության կարեւորությունը, բարձրացնելու դպրոցներում ներառվածության եւ դպրոցը չթողնելու աստիճանը, բարելավելու համակարգումը շահագրգիռ կողմերի շրջանում:
- Փախստականներին աջակցել, որպեսզի նրանք օգտվեն ծառայություններից, օրինակ՝ շահերի պաշտպանության, ֆինանսական աջակցության, տրանսպորտի, լեզվական ծառայությունների, կրթական հաստատությունների հետ համակարգման, փախստական երեխաներին դպրոց ուղեկցելու համար համայնֆային կազմակերպման դեպքերի վարման եւ խնդիրների լուծման միջոցով:
- Բարելավել փախստականների համար առկա ծառայությունների որակը՝ պետական դպրոցներին օգնելով ֆինանսական մասնակցությամբ, սարքավորումներով, նյութական մատակարարման եւ/կամ վերապատրաստման միջոցով: Այս ներդրումները պետք է կառավարվեն դպրոցի եւ/կամ ԿՆ-ի միջեւ պայմանագրային հարաբերությամբ, որն ամրագրում է պայմանագրային բոլոր կողմերի ակնկալիքներն ու պարտավորությունները:
- Փախստականներին տրամադրել հավելյալ այնպիսի ծառայություններ, որոնք կարող են առկա չլինել այնքան ժամանակ, քանի որ ԿՆ-ն ունակ չէ ապահովել դրանց մատուցումը. օրինակ՝ լեզվի դասընթացներ, բաց թողածը լրացնելու դասընթացներ այն երեխաների համար, ովքեր դպրոցական ուսումնառության որոշակի

հատված բաց են բողեյ, հատուկ կրթություն, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, ինչպես նաև ծառայություններ ֆիզիկական հաճախումներին կամ հատուկ ուսումնական կարիքներ ունեցող փախստականների համար:

- Խուսափել փախստականների համար գուցահեռ կրթական ծառայությունների/ դպրոցների ստեղծումից եւ փոխարենը, հնարավորության դեպքում, նպաստել ինտեգրմանն ուղղված առաջխաղացմանը:
- Վերահսկել ծառայությունների մատուցման որակը, հնարավորության դեպքում՝ օգտագործելով ԿՆ տեղեկատվական համակարգը կամ ՄԱԿ ՓԳՀ-ի գործիչները՝ հարմարեցված ֆաղափային միջավայրին:

6. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի անդամները ակտիվորեն, թափանցիկ եւ խորակառնությունից գերծ ձեւով մասնակցում են ֆաղափային բնակավայրերում կրթական ծրագրերի նախնական գնահատմանը, պլանավորմանը, իրականացմանը, մոնիտորինգին եւ գնահատմանը:

Անհրաժեշտ է, որ ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերներն ապահովեն ակտիվ համայնքային մասնակցություն կրթական ոլորտում ծրագրային միջամտությունների բոլոր մակարդակներում: ՄԱԿ ՓԳՀ-ն հետամուտ է, որ փախստականների ձայնը լսելի լինի կրթական ոլորտի իշխանությունների մոտ: ՄԱԿ ՓԳՀ-ն նաեւ պաշտպանում է փախստականների մասնակցությունը կրթական այնպիսի կոմիտեներում, ինչպիսիք են ուսուցիչ-ծնող ասոցիացիաները (ՈւՄԱ): Ի հավելումն, գործակալությունը հետամուտ է այն բանին, որ որակյալ փախստական ուսուցիչներն աշխատանք ստանան պետական եւ մասնավոր դպրոցներում: ՄԱԿ ՓԳՀ-ի ֆաղափային կրթական ծրագրերը պետք է կապեր հաստատեն փախստականների ներկայացուցչական խմբերի հետ եւ խրախուսեն փախստականների կամավոր ներգրավվածությունը եւ ներդրումը կրթության առաջնության, առավել խոցելիներին բացահայտելու եւ աջակցելու գործում:

Գործնական ֆայլեր փախստականների ակտիվ մասնակցությունն ընդլայնելու նպատակով

6.1 Կրթական ծառայությունների մատուցման գործում փախստականների մասնակցության խթանում

Հետամուտ լինել եւ նպաստել, որ փախստականները տարբեր գործառնություններով ներգրավվեն կրթական ծառայություններում:

-- Փախստական բնակչության շրջանում գտնել կրթական ոլորտի փորձագետների (ուսուցիչներ, տնօրեններ, կրթության ոլորտի այլ աշխատակիցներ, ուսումնական պլաններ մշակողներ, դեկավարներ, այլք) եւ նրանց ներգրավել ծրագրերի պլանավորման եւ իրականացման աշխատանքներում:

-- Կրթության նախարարության եւ դպրոցների հետ բանակցել կրթության ոլորտի մասնագետներին/ ուսուցիչներին ժամանակավոր զբաղվածությամբ ապահովելու շուրջ՝ մինչեւ կգա ժամանակ, երբ նրանք տվյալ երկրում լիարժեք եւ մշտական աշխատանքի իրավունք կստանան: Փախստական ուսուցիչները կարող են ներգրավվել նաեւ փախստականների համար տվյալ երկրի մայրենի լեզվի եւ մշակույթի դասավանդմանը՝ արտագասարանային ժամերին:

-- Հետամուտ լինել, որ փախստական մասնագետներին ցույց տրվի օժանդակության՝ ձեռքբերելու զբաղվածություն կրթության եւ այլ ոլորտներում:

-- Խթանել փախստականների արտադրողական եւ ստեղծագործական ներուժը՝ բարելավելու կենսապահովման հնարավորությունները, որոնք կհանգեցնեն կրթությունից օգտվելու կարողությունների ընդլայնման:

-- Աջակցել կամավորական դերերի ստեղծմանը, որոնք ստանձնելով՝ փախստականները կխթանեն այլ փախստականների համար կրթությունը համայնակներում, կամ կմասնակցեն կրթական կոմիտեների կամ տեղական խորհրդատվական այլ մեխանիզմների աշխատանքներին, ինչպիսիք են համայնֆային/թաղային զարգացման կոմիտեները, ինչի շնորհիվ նրանք հնարավորություն կստանան մասնակցելու կրթության պլանավորմանը եւ որոշումների կայացմանը: Կրթության հարցերով համայնֆային կոմիտեները պետք է ընդգրկեն խոցելի խմբերի ներկայացուցիչների, համայնֆային զարգացման ցանցերը կարող են օժանդակել դրան:

6.2 Աջակցություն փախստականների խմբերի եւ կազմակերպությունների մասնակցությանը եւ ներկայացվածությանը

Հետամուտ լինել եւ նպաստել փախստականների խմբերի եւ կազմակերպությունների կարողությունների ստեղծմանը:

-- Հաճախ փախստականները ստեղծում են իրենց սեփական ներկայացուցչական խմբերը, ասոցիացիաները եւ համայնֆային կազմակերպությունները (ՀմԿ): ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերները կարողությունների նպատակային ստեղծմանն ուղղված գործողությունների միջոցով պետք է աջակցեն նմանատիպ գործընթացներին՝ այդ կառույցների արդյունավետությունը եւ ծախսարդյունավետությունը մեծացնելու նպատակով. օրինակ՝ կրթական հնարավորություններին հասու չլինելու, դասերին չհաճախելու կամ դպրոցից դուրս մնալու խորֆային պատճառների վերլուծություն եւ դրանց մասին հաղորդում, կրթական ուղերձների առաջնություն, ներգրավվածություն ապահով ուսումնական միջավայրերի ստեղծմանը, կամ՝ աջակցություն խոցելի փախստականներին:

-- Հավասար կարեւորություն ունի երեխաների եւ երիտասարդների մասնակցությունը կրթական գործողություններին: Նրանք ոչ միայն իրավունք ունեն լսելի լինել այն հարցերում, որոնք ազդում են իրենց կյանքի վրա, այլեւ պետք է հրավիրվեն ակտիվորեն մասնակցելու կրթական ծրագրերի եւ նախագծերի նախնական գնահատումներին, պլանավորմանը, իրականացմանը եւ վերջնական գնահատմանը: Երեխաները եւ երիտասարդները կարող են եւ պետք է կարեն դեր խաղան՝ վերհանելով բացակասներին եւ օգնելով նրանց՝ հաճախել դասերին: Պետք է խթանել նրանց կարողությունը՝ նախաձեռնելու դրական փոփոխություններ եւ դառնալու զարգացման հարուցիչներ:

-- Կրթական կոմիտեներում եւ ՈՒԾԱ-ներում փախստական ծնողների ընդգրկման միջոցով համայնֆային մասնակցությունը կօգնի նրանց՝ աջակցել եւ պաշտպանել իրենց երեխաներին: Այն դեպքերում, երբ գոյություն ունեն իրավական սահմանափակումներ, հարկ է բանակցել դպրոցի կառավարման մեջ/խորհրդում «դիտորդի կարգավիճակ» ստանալու շուրջ:

-- Հարկ է ծնողներին էլ ավելի խորությամբ իրազեկել կրթության կարևորության մասին և նրանց ուսուցանել դպրոցի կառավարման խնդիրների շուրջ, մինչդեռ տեղացի ուսուցիչները և դպրոցին առնչվող այլ աշխատակիցները կարիք ունեն փախստականներին վերաբերող խնդիրների թեմայով իրազեկման և ուսուցման:

6.3 Համայնքի ներգրավումը կրթական համատեքստի վերհանման գործում

-- Գնահատել բոլոր սովորողների կրթական կարիքները:

-- Պարզել տեղերում առկա ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսները:

-- Վերլուծել տղաների և աղջիկների, երիտասարդների և չափահասների միջև գոյություն ունեցող և փոփոխվող հարաբերությունները:

-- Խորհրդակցել երեխաների և երիտասարդների հետ և խթանել նրանց իմաստալից մասնակցությունը:

-- Գնահատել համայնքի ներսում գոյություն ունեցող հեղինակության և ազդեցիկության դինամիկան, ներառյալ՝ լեզվական խմբերի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, նույն իրականացնել ցանկացած խմբում, որը կարող է հայտնվել դուրս մղված վիճակում (փոքրամասնություններ և այլն):

-- Բացահայտել անվտանգությանն առնչվող խնդիրները, մտահոգությունները և սպառնալիքները, պարզել ապահով և հասանելի դպրոցական վայրերը, տեղական վտանգները և աղետների ռիսկերի նվազեցման հարցում գոյություն ունեցող տեղական մոտեցումները:

-- Վերլուծության ենթարկել երեխաներին և երիտասարդներին, աշխատակազմերը և կրթական հաստատությունները հնարավոր հարձակումներից, ներառյալ՝ սեռային և գենդերային բռնությունից (ՄԳՀԲ) պաշտպանելու եղանակները:

-- Հատկորոշել համապատասխան կենսափրկիչ (ականների վերաբերյալ իրազեկվածություն) և կոնֆլիկտազգայուն (ՄԳՀԲ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ) կրթական ուղերձները, ինչպես նաև շրջակա միջավայրի ըմբռնումը կրթության միջոցով արձագանքման բոլոր ասպեկտներում ինտեգրելու ուղիներ:

7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ստեղծել և կիրառել մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) գործուն համակարգեր՝ բարելավելու ծրագրի իրականացումը, գերակայությունների որոշումը և ազդեցությունը:

Մոնիտորինգը և գնահատումը մարդասիրական և զարգացման համատեքստերում արդյունքահեռ ծրագրերի էական բաղադրիչներից են և վճարովու նշանակություն ունեն կրթական ոլորտի ծրագրերի համար: Քանի որ փախստականների միջավայրը սովորաբար դինամիկ փոփոխվող է, և իրավիճակը մշտապես ձեռափոխվում է, անհրաժեշտ է, որ ծրագրերը պարբերաբար ենթարկվեն մոնիտորինգի և հարմարեցվեն փոփոխվող համատեքստին և կրթական կարիքներին: Սա հատկապես ահնայտ է ֆաղափային բնակավայրերում, որտեղ փախստականները չափազանց շարժունակ են՝ ուղղվելով այնտեղ, որտեղ աշխատանքի հնարավորություններն են, առավել էժան կացարանները կամ դպրոցներին մոտիկությունը: Մոնիտորինգը հավաստում է, որ ծրագրային միջամտությունները

սեղին են եւ արձագանքող, վեր է հանում բարեկաման հնարավորությունները եւ խթանում է հաշվետվականությունը: Մոնիտորինգի եւ գնահատման արդյունքների հիման վրա գործելը կընդլայնի ընթացիկ եւ ապագա ծրագրերի պահանջվածությունը, ծախսարդյունավետությունը եւ արդյունավետությունը: Գնահատումների արդյունքները պետք է հանգեցնեն ռազմավարության եւ պլանավորման վերաբերյալ հիմնավորված որոշումների կայացման, գործընկերներին եւ շահագրգիռ կողմերին տրամադրեն շեշտակի հետադարձ սեղեկություններ եւ ներառվեն դոնորներին ներկայացվող հաշվետվություններում ու ռեսուրսների հավաքագրմանն ուղղված նախաձեռնություններում: Մոնիտորինգը եւ հաշվետվությունների ներկայացումը սերտորեն շղկապված են ՄԱԿ ՓԳՀ-ի Արդյունահան կառավարման (ԱՀԿ) հետ, որին օգնում է «FOCUS»⁹ համակարգչային ծրագիրը, որի խնդիրն է զարգացնել մոնիտորինգը եւ բարելավել արդյունահան պլանավորումը եւ ծրագրերի մշակումը:

Գործնական քայլեր մոնիտորինգի եւ գնահատման շրջանակում

7.1 Մոնիտորինգի ենթակա հիմնական բաղադրիչների որոշումը

-- Ուսումնական միջավայրի տեղադրությունը, ֆիզիկական հասկանիչները եւ հնարավորությունները՝ ուշադրություն դարձնելով հասանելիությանը, որակին եւ պաշտպանվածությանն առնչվող ասպեկտներին՝ նպատակ ունենալով ստեղծել սովորողների համար նպաստավոր միջավայր:

-- Աղջիկների ապահովություն եւ սեռային ու գեղեցիկահան բռնության կանխարգելում:

-- Տվյալներ դպրոցում ներգրավվածության, դպրոց հաճախելու եւ այն ավարտելու վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով գեղեցիկահան հավասարությանը:

-- Ուսուցիչների որակավորումը եւ հմտությունները դասարանում, ուսուցիչների հաճախումը դպրոց:

-- Իգական/արական սեռերի ուսուցիչների հարաբերակցությունը:

-- Դպրոցից դուրս մնացած երեխաների բանակը եւ նրանց գտնվելու վայրը:

-- Դպրոցական նյութերի եւ պարագաների, ներառյալ՝ դասագրքերի, դասավանդման եւ ուսումնական նյութերի բաշխումը, ստացումը եւ օգտագործումը:

-- Ծառայություններից եւ ռեսուրսներից սովորողների, ուսուցիչների եւ ծնողների բավարարվածության մակարդակը:

-- Կրթական ծրագրերի պլանավորված եւ չպլանավորված ազդեցությունները պետք է ենթարկվեն մոնիտորինգի՝ ապահովելու համար, որ դրանք ոչ միայն միտումնավոր ձեռով չնպաստեն խտրականության, կոնֆլիկտների կամ մարզինալացման (լուսանցֆայնացման) տարածմանը:

⁹ «FOCUS»-ը ՄԱԿ ՓԳՀ-ի Արդյունահան կառավարման (ԱՀԿ) համակարգչային ծրագիրն է, որի նպատակն է բարձրացնել ՄԱԿ ՓԳՀ ծրագրերի ղեկավարման որակը, արդյունավետությունը եւ ազդեցիկությունը: «FOCUS»-ը կձգտի հասնել չափելի արդյունքների՝ ծրագրերի իրականացման, բյուջեառավարման, մոնիտորինգի եւ գնահատման գործընթացների ինտեգրացված մշտադիտարկման, ինչպես նաեւ գիտելիքի կառավարման միջոցով:

7.2 Կրթության կառավարման գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի հասկարուծումը և օգտագործումը

- Կրթության նախարարության և գործընկեր կազմակերպությունների հետ հետևել, թե արդյո՞ք գոյություն ունեն սվյալների հավաքման, ի մի բերման և վերլուծման համակարգեր, և արդյո՞ք դրանք կարող են համատեղ օգտագործվել:
- Ներմուծել փախստականների վերաբերյալ սվյալները և տեղեկությունների վերլուծությունը, եթե տեղերում գոյություն ունեն Կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր (ԿԿՏՀ): Հանախ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ստատում է նման համակարգերի ստեղծմանը:
- Հարգել Կրթության նախարարության կամ կրթության ոլորտի պետական համապատասխան մարմինների ղեկավարությանը և նրանց որդեգրած ուղղությունը՝ իրավիճակի նախնական գնահատման և ֆարտեզագրման նպատակով: Եթե ազգային մակարդակով գոյություն չունի ԿԿՏՀ, ապահովել, որ տեղական իշխանությունները հնարավորինս լիարժեքորեն ներգրավվեն փախստականների վերաբերյալ սվյալների հավաքմանը և վերլուծությանը:
- Մոնիտորինգի իրականացման ընթացքում կիրառել ՄԱԿ ՓԳՀ-ի «Կրթական ստանդարտները և ցուցանիշները» [Education Standards and Indicators] (տես կետ 7.7-ը ստորև):

7.3 Տվյալների հավաքումը, վերլուծումը և դրանց վերաբերյալ հաշվետու լինելը

- Տվյալների հավաքումը, վերլուծումը և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելը կարող են իրականացվել ՄԱԿ ՓԳՀ-ի իրականացնող գործընկերների (ԻԳ) և ֆողաֆաջիական հասարակության այլ կազմակերպությունների կողմից՝ իրենց համապատասխան բնակավայրերում:
- Զարգացնել մարդկանց կարողությունները՝ հավաքելու տեղեկություններ խնդրո առարկա բնակչության բոլոր խմբերից՝ հատուկ ուշադրություն դարձնելով մշակութային առանձնահատկություններին: Երաշխավորել, որ թիմերը լինեն գեներային առումով հավասարակշռված, ազատորեն տիրապետեն տեղական լեզվին (լեզուներին) և հմուտ լինեն սվյալների հավաքագրման գործում:
- Հնարավոր է, որ տեղերում ընդունված աշխատանքները պահանջեն, որ կանանց և փոքրամասնություններ հանդիսացող խմբերի հետ առանձին կարգով հանդիպեն այնպիսի անհատներ, ովքեր վայելում են նրանց վստահությունը:
- Համայնֆային առաջնորդները/ ներկայացուցիչները, ներառյալ՝ երիտասարդները, պետք է հնարավորինս վաղ փուլում ներգրավվեն այն կրթական ծրագրերի մոնիտորինգում, որոնք անմիջականորեն ազդում են իրենց կյանքի վրա: Սա հատկապես կարևոր է այնպիսի հատուկ խմբերի համար նախատեսված ոչ ֆորմալ ծրագրերում, ինչպիսիք են դեռահաս աղջիկները կամ հաշմանդամություն ունեցող սովորողները:
- ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակազմը պետք է, այնուամենայնիվ, պատասխանատու լինի սվյալների որակի և հուսալիության ապահովման համար:

7.4 Տվյալներին և տեղեկություններին հասու լինելը բազմակի աղբյուրների օգտագործման միջոցով

- Դպրոցական գրանցամատյաններ.
- Իրականացնող գործընկերների կազմած հաշվետվություններ.
- Մոնիտորինգային տվյալներ՝ հավաքված դաշտային այցելությունների միջոցով.
- Նախնական գնահատման թեստերի և ֆնկցիաների արդյունքներ.
- Դպրոցների և տնային տնտեսությունների վախճանավալ ընտրանքային ուսումնասիրություններ.
- Ֆոկուս-խմբային ֆնկցիաներ, ներառյալ՝ տեղեկությունների հավաքման SUF գոյություն ունեցող մեխանիզմների միջոցով.
- Դպրոցների և համայնքների ընտրված դեպքերի ուսումնասիրություններ.
- Կրթական համապետական ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ՝ ստացված Կրթության նախարարության կամ կրթություն սրամադրող այլ կառույցներից:

7.5 Սովորողների մոնիտորինգ

- Այն վայրերում, որտեղ գոյություն ունեն կրթության որակը և սովորողների կողմից հմտությունների ձեռքբերումը մոնիտորինգի ենթարկելու համապետական մոնիտորինգային համակարգեր, ապահովել, որ դրանք ներառեն փախստականներին (հաճախ այս համակարգերը ստանում են աջակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ից և/կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ից):
- Սովորողների հմտությունների մակարդակն անհրաժեշտ է գնահատել նախքան դպրոց ընդունվելը, իսկ հմտությունների ձեռքբերումը պետք է պարբերաբար մոնիտորինգի ենթարկվի ուսումնական տարվա ընթացքում տարբեր ժամանակահատվածներում, ինչպես նաև ուսուցման/ դասընթացի ավարտին: Հարկ է, մասնավորապես, մոնիտորինգի ենթարկել հետևյալը.
 - Փոքր տարիքի երեխաների իմացական (կոգնիտիվ) և սոցիալ-գրգացական (էմոցիոնալ) զարգացումը.
 - Տառաճանաչության և թվաբանական հմտությունները.
 - Կյանքի կարենդրագույն հմտությունների վերաբերյալ իրազեկվածությունը և դրանց կիրառումը.
 - Գրագիտության ձեռքբերմանը հաջորդող շրջանում ընթերցանության նյութերի հասանելիությունը:
- Կրթական ծրագրի մոնիտորինգային ցուցանիշերը (ինդիկատորները) ներառում են.
 - Դպրոցում ընդգրկված/դպրոց հաճախող սովորողների ֆանակը՝ տարանջատված ըստ սեռի և տարիքի: Այս թվերը պետք է գրանցվեն ըստ գուտ ընդգրկվածության մակարդակի (ՋԸՄ) [net enrolment rate], որն այն սովորողների ֆանակն է, ովքեր հաճախում են իրենց տարիքին համապատասխան դասարան, և ըստ համախառն ընդգրկվածության մակարդակի (ՀԸՄ) [gross enrolment rate], որն ըստ դասարանների

սովորողների ընդհանուր թիվն է՝ անկախ նրանց տարիքից, որպեսզի ընդգծվի, թե արդյո՞ք գոյություն ունի սվյալ տարիքային խմբի սահմանը գերազանցող տարիք ունեցող երեխաների հիմնախնդիր:

- Դպրոց գնալու տարիքին հասած սովորողների տոկոսը, ովքեր չեն հանախում դպրոց կամ կրթության այլ հաստատություն:
- Գործոցներ, որոնք կարող են կանխարգելել կամ սահմանափակել մասնակցությունը, օրինակ սեռը, էթնիկական ծագումը, դավանանքը, լեզուն, տնային առօրյա աշխատանքները, հաճախումությունը, եւ այլն:
- Կին ուսուցիչների տոկոսը:
- Յուրաքանչյուր դասարանում սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը:
- Ուսուցիչների եւ օժանդակ աշխատակիցների քանակը եւ հատկանիշները, տարանջատված ըստ սեռի:
- Ուսուցիչների վերապատրաստման մակարդակը:
- Սովորողների համար նախատեսված գործողությունների համապատասխանությունը նրանց տարիքին եւ մակարդակին:
- Ուսումնական միջավայրի որակը, ներառյալ՝ ջրի եւ սանիտարական տարբերակված պայմանների, ուսումնական նյութերի, արհավիրումների առկայությունը, եւ այլն:
- Դպրոցում չընդգրկվելու, դպրոց չհաճախելու եւ դպրոցից/դասերից դուրս մնալու պատճառները:

7.6 Իրականացնող գործընկերների (ԻԳ) մոնիտորինգ

-- Ապահովել, որ գործընկերներն ունենան հստակ արդյունքահեռն պլաններ, եւ որ առաջընթացը հնարավոր լինի ենթարկել մոնիտորինգի:

-- Իրականացնել պարբերական այցելություններ ծրագրերի իրականացման վայրեր՝ սեղերում գնահատումներ կատարելու նպատակով:

-- Չհայտարարված մոնիտորինգային այցելությունները կարող են բարելավել մոնիտորինգային սվյալների վավերականությունը:

-- Կազմակերպել պարբերական հանդիպումներ իրականացնող գործընկերների հետ եւ, անհրաժեշտության դեպքում, ադապտացնել ծրագրային մոտեցումները: Հենվել սովորողների մոնիտորինգի եւ նախնական գնահատման արդյունքների վրա եւ համապատասխանաբար ձեւավորել ծրագրերը:

-- Վերանայել իրականացնող գործընկերների հաշվետվությունները (ֆինանսական եւ նկարագրական)՝ ապահովելու ակնկալվող արդյունքներին հասնելը:

-- Իրականացնել միջանկյալ եւ վերջնական (ամփոփիչ) գնահատումներ:

7.7 Կրթական «FOCUS» ցուցանիշների կիրառումը (ընդհանուր)

Կրթական ցուցանիշներ.

-- Հասանելիություն

- մտահոգություն առաջացնող 3-5 տարեկանների %-ը, ովքեր ընդգրկված են նախապարտցական կրթության համակարգում.
- մտահոգություն առաջացնող 6-11 տարեկանների %-ը, ովքեր ընդգրկված են տարրական կրթության համակարգում.
- մտահոգություն առաջացնող 12-17 տարեկանների %-ը, ովքեր ընդգրկված են միջնակարգ կրթության համակարգում:

-- Որակ

- որակավորում ունեցող ուսուցիչների %-ը.
- մտահոգություն առաջացնող 15-59 տարեկան անձանց %-ը, ովքեր գրագետ են:

-- Պատասխանվածություն

- իգական սեռի ուսուցիչների %-ը.
- 15-24 տարեկան երիտասարդների %-ը, ովքեր ընդգրկված են հավաստագրված ուսուցման ծրագրերում.
- այն, թե որքանով են հանաչվում փախստականների/ հայրենադարձների որակավորումները:

7.8 Պարբերական եւ անկողմնակալ գնահատման կազմակերպում

Վերլուծել ծրագրային միջամտությունների օգտակարությունը՝ հիմնվելով գնահատման հետեւյալ չափանիշների վրա.

-- **Պահանջվածություն.** Ո՞րն է տվյալ ծրագրային միջամտության օգտակարությունը՝ հաշվի առնելով առաջնահերթ այլ կարիքները, խնդիրները եւ ջանքերը:

-- **Արդյունավետություն.** Արդյո՞ւմ տվյալ գործողությունը հասնում է բավարար առաջընթացի՝ համաձայն ամրագրված նպատակների:

-- **Ծախսարդյունավետություն.** Արդյո՞ւմ ծրագիրն օգտագործում է ամենափչ ծախսեր պահանջող ռեսուրսները՝ տվյալ համատեքստում հասնելու սահմանված արդյունքներին:

-- **Ներազդեցություն.** Որո՞նք են ծրագրային միջամտության արդյունքները, ներառյալ՝ անհատների, համայնքների եւ հաստատությունների վրա ունեցած սոցիալական, տնտեսական եւ բնապահպանական հետեւանքները՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

-- **Համակցվածություն/համակարգվածություն.** Արդյունք տվյալներ հավաքելիս, վերլուծության ենթարկելիս եւ օգտագործելիս գործընկերներն աշխատում են միասին:

-- **Հարակալունություն.** Արդյունք հավանական է, որ տվյալ գործողությունը եւ դրա ունեցած ազդեցությունը կարունակվեն այն ժամանակ, երբ դադարի արտաքին աջակցությունը, եւ արդյունք այն կիրկնօրինակվի (կտարածվի) կամ կադապտացվի:

-- Կամ իրականացնել ընթացիկ ծրագրային միջամտությունների գնահատման միջնաժամկետ գործողություն, կամ միջամտության իրականացման/ ծրագրային փուլի ավարտին կատարել ամփոփիչ գնահատում:

-- Պատրաստել ամփոփիչ գեկույց, որը կներառի ստացված արդյունքների փաստաթղթավորումը եւ ամբողջական գրառումները, եզրակացությունները, որոնք համապատասխանում են ստացված արդյունքների սինթեզին եւ վերլուծությանը, ինչպես նաեւ ապագա նախագծերի վերաբերյալ առաջարկությունները:

-- Կազմել քաղված դասերի համախումբ՝ համապատասխան այն եզրակացություններին, որոնք հնարավոր է ընդհանրացնել եւ տարածել գնահատման ենթարկված տվյալ դեպքի սահմաններից դուրս, ներառյալ այն դասերը, որոնք առավել ընդարձակ կարեւորություն ունեն երկրի ամբողջ տարածքում կամ գլոբալ մասշտաբով, ՄԱԿ ՓԳՀ-ի կամ ավելի ընդգրկուն միջազգային հանրության տեսակետից:

ՕՃԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների կրթությունը քաղաքային միջավայրում. 2010 թ. ՄԱԿ ՓԳՀ ամենամյա խորհրդակցություններ ՀԿ-ների հետ» [Refugee education in urban settings, 2010 UNHCR Annual Consultations with NGOs], հունիսի 29, 2010 թվական

<http://www.unhcr.org/4a2393776.html>

«Փախստականների կրթությունը քաղաքային միջավայրում. Նայրոբից, Կամպալայից, Ամմանից, Դամասկոսից նախադեպերի վերլուծություն» [Refugee Education in Urban Settings, Case Studies from Nairobi - Kampala - Amman – Damascus], ՄԱԿ ՓԳՀ, դեկտեմբեր, 2009 թվական

<http://www.unhcr.org/4b278e4f9.html>

«Քաղաքային փախստականների կրթություն. Քննարկման ներկայացվող փաստաթուղթ գերագույն հանձնակատարի երկխոսության համար» [Urban Refugee Education: Discussion Paper for the High Commissioner’s Dialogue], ժնե, դեկտեմբեր, 2009 թվական

<http://www.unhcr.org/4afc33689.html>

«Քաղաքային միջավայրում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ քաղաքականություն» [UNHCR Policy on Refugee Protection and Solutions in Urban Areas], ՄԱԿ ՓԳՀ ժնե, սեպտեմբեր, 2009 թվական

<http://www.unhcr.org/refworld/docid/4ab8e7f2.html>

Կրթության ոլորտի 2010-2012 թթ. ռազմավարություն. «ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց կրթություն» [“Education for All Persons of Concern to UNHCR”], ՄԱԿ ՓԳՀ ժնե, սեպտեմբեր, 2009 թվական, <http://www.unhcr.org/4af7e71d9.html>

Ապահով դպրոցներ եւ ուսումնական միջավայր [Safe Schools and Learning Environment], «Ինչպե՞ս կանխարգելել բռնությունը փախստականների դպրոցներում եւ ինչպես արձագանքել դրան» [“How to prevent and Respond to Violence in Refugee Schools?”], ՄԱԿ ՓԳՀ ժնե, հուլիս, 2007 թվական

<http://www.unhcr.org/4677981a2.html>

«Կրթության ոլորտի դաշտային ուղեցույց» [Education Field Guidelines], ՄԱԿ ՓԳՀ ժնե, 2011 թվական

<http://www.unhcr.org/40586bd34.html>

«Ուսումնասիրություն հանուն ապագայի. ՄԱԿ ՓԳՀ-ի ձեռնարկ զարգացող երկրներում փախստականների կրթության վերաբերյալ» [Learning for a Future: A UNHCR publication on refugee education in developing countries]. ժնե, 2002 թվական

<http://www.unhcr.org/4a1d5ba36.html>

«Կրթական ֆորումի նախաձեռնություն. Նորարարական ռազմավարական գործընկերություններ փախստականների կրթության ոլորտում. Համատեղ աշխատանք հանուն պաշտպանության եւ տեղական լուծումների» [Education

Forum Initiative: Innovative Strategic Partnerships in Refugee Education (INSPIRE): Working Together For Protection and Durable Solutions], ՄԱԿ ՓԳՀ, Ժնև, մարտ, 2004 թվական
<http://www.unhcr.org/408e06224.html>

«Ստանդարտներ և ցուցանիշներ (ՍՑ)» [Standards and Indicators (S&I)]
<http://www.unhcr.org/pages/4a0183436.html> և ՄԱԿ ՓԳՀ-ի «Կրթական ստանդարտների և ցուցանիշների ուղեցույց» [Education S&I Handbook], 2006 թվական
<http://www.unhcr.org/467797452.html>

«Գլոբալ կիզակետ» [Global Focus].
http://bi.focus.unhcr.org/cognos8/cgi-bin/cognos.cgi?b_action=xts.run&m=portal/main.xts&startwel=yes

ՄԱԿ ՓԳՀ ՎԵՖ-ԷՋԵՐ

Կրթություն. <http://www.unhcr.org/pages/49c3646cda.html>

«DAFI» կրթաբաժնի. <http://www.unhcr.org/pages/49e4a2dd6.html>

«Ինը միլիոն» քարոզարժույթ [Ninemillion campaign]. <http://www.ninemillion.org/>

ԱՐՏԱԿԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ ԿԱՄ ԻՆՏԵՐՆԵՏԱԹԻՆ ԷՋԵՐ

Արտակարգ իրավիճակներում, էրոնիկական ճգնաժամերի և վաղ վերականգնման պայմաններում կրթության նվազագույն ստանդարտներ [Minimum standards for Education in Emergencies, Chronic Crises and Early Reconstruction], ՄՅԱԻԿ – Միջգերատեսչական ցանց հանուն արտակարգ իրավիճակներում կրթության [INEE - The Inter-agency Network for Education in Emergencies], Լոնդոն, 2004 թվական
http://www.ineesite.org/index.php/post/inee_handbook/
<http://www.ineesite.org/en/minimum-standards/handbook>

ՄՅԱԻԿ գործիքակազմ [INEE Tool kit], ներառյալ արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտում արձագանքման վերաբերյալ բոլոր ուղեցույցները.

-- «Կրթության նվազագույն ստանդարտներ. պատրաստվածություն, արձագանքում, վերականգնում» [Minimum Standards for Education: Preparedness, Response, Recovery]

-- «Գրպանի ուղեցույց գեղի վերաբերյալ» [Pocket Guide to Gender]

-- «Գրպանի ուղեցույց հաճախողներին ունեցող անձանց սատարելու վերաբերյալ» [Pocket Guide to Supporting Learners with Disabilities]

-- «Գրպանի ուղեցույց ներառական կրթության վերաբերյալ» [Pocket Guide to Inclusive Education]

-- «Ուղղորդող ցուցումներ ուսուցիչների վնասման վերաբերյալ» [Guidance Notes on Teacher Compensation]

-- «Ուղղորդող ցուցումներ ուսուցման և ուսումնառության վերաբերյալ» [Guidance Notes on Teaching and Learning]

-- «Ուղղորդող ցուցումներ առավել ապահով դպրոցների շինարարության վերաբերյալ» [Guidance Notes on Safer School Construction]

-- «Ներառական կրթություն» [Inclusive Education]

<http://www.ineesite.org/toolkit/Home.php>

Ուղեցույց արտակարգ իրավիճակների պայմաններում կրթության համակարգում ՄԻԱՎ-ի վերաբերյալ [Guidance on HIV in Education in Emergencies]. <http://www.ineesite.org>

«Կրթություն բոլորի համար» [Education for All] (ՅՈՒՆԵՍԿՕ/UNESCO).

http://www.unesco.org/education/efa/ed_for_all/

Միավորված ազգերի կազմակերպության Հազարամյակի զարգացման նպատակներ [United Nations Millennium Development Goals]. <http://www.un.org/millenniumgoals/>

Բանաձև արտակարգ իրավիճակներում կրթության իրավունքի վերաբերյալ [Resolution on the Right to Education in Emergency Situations], ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, հուլիս, 2010 թվական

<http://www.unhcr.org/refworld/topic,4565c22529,458aa6c22,4c6241bb2,0.html>

Բանաձևի նախագիծ փախստականների, միգրանտների և ապաստան որոնողների կրթական իրավունքի վերաբերյալ [Draft Resolution on the Right to Education of Refugees, Migrants and Asylum Seekers], Մարդու իրավունքների խորհուրդ [Human Rights Council], սեպտեմբեր, 2010 թվական

<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/165/91/PDF/G1016591.pdf?OpenElement>

«Կրթություն բոլորի համար. Համաշխարհային մենիտորինգի զեկույց, 2011 թվական. Թափնված հզեմժամը. զինված հակամարտություն և կրթություն» [EFA Global Monitoring Report 2011: The hidden crisis: Armed conflict and education]

<http://www.unesco.org/new/en/education/themes/leading-the-international-agenda/efareport/>

<http://unesdoc.unesco.org/images/0019/001907/190743e.pdf>

<http://www.unesco.org/new/en/education/themes/leading-the-international-agenda/efareport/reports/2011-conflict/>